Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

12895
89.99
U-12

30

429
6

ՓՆՋԻԿ

# ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Ազգային երգչի,

Վաստակոյ Համբարձումեան Մաղաթեանց,

Երեւանցւոյ։

№ 48

Ի. Ս. Պ. Բ.
1871.



Dessinée par Viktor Wolokitinne.

Վ. Հ. ՄԱՂԱԹԵԱՆՑ:

891.99
Մ-12

ՓՆՋԻԿ

# ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Ազգային երգեր,

Վասակայ Համբարձումեան Մաղաթեանց,

Երևանցւոյ:

Դ. Ս. Պ. Բ.

1871.

Дозволено Цензурою. Спб. 29 Іюля 1870 г.

ТИПОГРАФІЯ ИМПЕРАТОРСКОЙ АКАДЕМІИ НАУКЪ.
(Вас. Остр. 9 лин. № 12.)

Նորին Պայծառափայլութեան,

Հետեւորդի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ;

կոմսի Իլարիոնի Յովհաննիսեան,

ՎՈՐՈՆՑՈՎԻ-ԴԱՇԿՈՎ:

Նուիրէ

հեղինակն:

ЕГО СІЯТЕЛЬСТВУ,

СВИТЫ ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА,

ГРАФУ ИЛАРІОНУ ИВАНОВИЧУ

ВОРОНЦОВУ-ДАШКОВУ.

ПОСВЯЩАЕТЪ

АВТОРЪ.

# ՑԱՆԿ։

Էջ.

1) Որբ եմ ես . . . . . . . . 1
2) Կապոյտ աչքեր . . . . . . . . —
3) Ուրեմն էի . . . . . . . . 2
4) Ես քեզանով զրկուած եմ . . . . . . . . 3
5) Աւաղ անդ սրտիս պէս . . . . . . . . 4
6) Բանտարկեալ . . . . . . . . 7
7) Ազատիչ . . . . . . . . 8
8) Զրոյց ընկերոջըս . . . . . . . . —
9) Թուր, Թուր . . . . . . . . 9
10) Գերեզմանանոց . . . . . . . . 10
11) Գարուն . . . . . . . . —
12) Երգ . . . . . . . . 11
13) Տեսարան . . . . . . . . 12
14) Ցանկարծախօս բան . . . . . . . . 16
15) Ասումն թէ . . . . . . . . 17
16) Աշխարհն հիմա փոխարկուելէ . . . . . . . . 18
17) Ժամանակ . . . . . . . . 19
18) Երանի նորան . . . . . . . . —
19) Հրաւէրք . . . . . . . . 20
20) Արբեցուի . . . . . . . . 21
21) Գիւլլուզար և Մարջան . . . . . . . . 22

22) Գանգատ . . . . . . . . . . 23
23) Օտար ճանապարհորդ . . . . . . . . . . 24
24) Խրատ . . . . . . . . . . 25
25) Խաղացինք մենք . . . . . . . . . . 27
26) Յետ մահուան Դ....ի . . . . . . . . . . —
27) Անցեալ օրեր . . . . . . . . . . 28
28) Մի ասեր թէ ջահելուիրս . . . . . . . . . . 29
29) Կորուսեալ ճնճղուկ . . . . . . . . . . 30
30) Հոգիս տկարէ տկար . . . . . . . . . . —
31) Երազ . . . . . . . . . . 31
32) Երգչին . . . . . . . . . . 33
33) Որբ . . . . . . . . . . 34
34) Ի նուէր Օ....ն . . . . . . . . . . 35
35) Չէ երկնային նա . . . . . . . . . . 36
36) Պատասխանի հարցմանն, Որդ է լոյսն, յորմէ բուրէ հոտն . . . . . . . . . . —
37) Անցք կենաց . . . . . . . . . . 37
38) Պատերազմի անուանիցն . . . . . . . . . . 38
39) Օտար կեանք . . . . . . . . . . —
40) Երգ Հայրենի . . . . . . . . . . 39
41) Քէյֆ . . . . . . . . . . 41
42) Տարակուսեալ . . . . . . . . . . —
43) Ստուեր . . . . . . . . . . 43
44) Իմ տողերըս . . . . . . . . . . 44
45) Ուրախ ժամեր . . . . . . . . . . —
46) Մուխամմազ ՚ի պատիւ արժանընտիր երգիչն „Սէյեադ" —
47) Ծերք . . . . . . . . . . 45
48) Ինչպէս չասեմ ճշմարիտն . . . . . . . . . . 46
49) Ա՜ծ վկայ է . . . . . . . . . . —





50) Առ Հայրենիք . . . . . . . . . . 47
51) Վանեցի Հայ . . . . . . . . . . 48
52) Ինձի համար միշտ աստւմեն . . . . . . . . . . —
53) Իմ սիրտըս արիւնով լցուած . . . . . . . . . . 49
54) Զանգի . . . . . . . . . . 50
55) Ապրումեմ ես տուած յուսովդ . . . . . . . . . . 51
56) Բարձրացրու քո գլուխդ . . . . . . . . . . 52
57) Կամուրջ Աղէքսանդրապոլու . . . . . . . . . . 53
58) Երբ գիշերուայ քաղցր քունը . . . . . . . . . . 54
59) Դիւանի . . . . . . . . . . —
60) Վաւ քննիր դու իմ հարցմունքըս . . . . . . . . . . 55
61) Թուշըդ դէպ երեսիս թեքիր . . . . . . . . . . —
62) Առ Գ. Ա. Ա. . . . . . . . . . . 56
63) Երբ ես բարձիս վերայ պարկած . . . . . . . . . . 57
64) Մուխամմազ . . . . . . . . . . 58
65) Վուռ կէս գիշեր ամառնային . . . . . . . . . . 59
66) Իշխան և Աղքատ աղջիկ . . . . . . . . . . —
67) Գիշերային միտք . . . . . . . . . . 61
68) Ուր են . . . . . . . . . . —
69) Այլայլութիւնն աշխարհի . . . . . . . . . . 62
70) Այ տղայ Օհան . . . . . . . . . . 64
71) Վերջին խօսք . . . . . . . . . . 65

Որբ եմ ես և աշխարհումըս
բախտ ստացեալ չեմ տեսած,
ինձ նեղեցին վատ օրերըս
բախտէս եղէ հեռացած։ —
Ուղեցոյցըս էին ցաւերն
որ կեանքիս հետ խօսքը մի են...
Նորա հետ մինչ 'ի սև ծովն
երթայ որբն, երթայ որբն։ —

*
*  *

Կապոյտ աչքեր։

1. Կապոյտ աչքեր!
խիստ թանգագին —
են, ձեր պաչեր։ —
Հայ աղջկերք,
այժմ անտէրէք,
աստղի պէս վառված,
վարդի պէս բացւած,
և սէրումն պրւած։

2. Վ՝ախտ ուրախութ՜
ես ձեզ եմ նայում,
կմ՝ խիստ տրտմութ՜
ձեզ միտըս բերում։
ձեր կապոյտ աչքեր
երբ ես եմ տեսնում,
հոգիս է գտնում
միշտ ուրախ օրեր։

3. Չեզ մօտ են փախչում
մտքերըս անճար,
և ձեզ են ուզում
տեսնել անդադար։

* * *

## Սիրելի էի։

Սիրելի էի... ինձ յայտնէ
սիրոյդ այն լայն գրկումը,
և անմոռաց իմ մտքիսէ
նրա պաչի անոյշ համը։ —

Ես տեսնումեմ միշտ երազիս
նրա թուխ թուխ աչքերը,
որ աստղի պէս լոյսեն տալիս
հոգւոյս մթնած տեղերը։ —

Լսումեմ միշտ քաղցր ձայներ
ինձ համար թանգագին խօսքեր,
կուզեմ գրկել... բայց երազէր
և ինձ աչքաճլվիստ էր։

Թռաւ, հեռացաւ, ինձ արաւ անտես
սիրտըս մնաց անյոյս ու անտէր,
երբ կ՚գրկեմ մինէլ քեզ ես,
և քո մէջքըդ անոյշ սէր։

Չեմ մոռանալ հեռանալու օրը
արտասունքը գետի պէս թափած,



և վզովըս փաթութված
նո՛ր սուրահաքաշ ձեռները։ —

Մխոսէ ինչպէս վերջին անգամ
խօսք տուեց միշտ սիրելու,
և ինձ իւրեան կեանքին անգամ
խոստացաւ նշանելու։

Տեսնելեմ հոգիք, փափուկ կրթուած
և անյոյս չարչարանքն ցանկուե՛...
Սիրելիք! կա՛րծեմ դուք և տեսած
լինիք այդ-բայց չէ նշան չարուե՛։

* * *

Ես քեզանով գրկուած եմ
չունիմ ոչ սիրտ, ոչ դադար,
այսուհետեւ պէտքէ ապրեմ
փշին նստած անդարար։ —

Ի զուր էի ես սպասում
թէ բաղդաւոր կլինեմ,
տիւ և գիշեր անքուն մնում
որ սիրոյդ արժան լինեմ։

Աւաղ! մտքերըս թռան
պարզ օրերըս հեռացան,
քեզ համար ինձ ծաղրատեղ
անուանեցիր դու անմեղ։

Քո արևներդ բոց չունի,
հողատունըդ է սառած,
կուրծքըդ անհոգի երևի
Նո՛ւ մէջ սիրտ չէ պարկած։ —

* * *

Աւա՛ղ! անդ սրտիս պէս դատարկէ
սիրելով, ներելով, և հազիւ մի խօսք ասելով,
անդ հանգչինք, պրւինք - ինչպէս կրակէ
սէ՛ աղջըկայ սիրտը սիրով։ —

Այժմ ժամէ մեզ փրկուիլ
ուրախ հոգւով, աղօթքով ապրել,
մինչև մեր արևը չի սառել
աշխատենք միմեանց սիրել։ —

Ես սկսելեմ, բայց ո՛հ Ա՜ծ!
ջահել անցկացած կեանքըս վրայ
չարչարւումեմ մահի դէմ կայնած
լինի թէ այնտեղ ուրախութի՛ չկայ։ —

Դէմքըր մտնել չեմ կարողանում
մտքըս չարչարանքն է տանջում,
ինչպէս սէրը գեղեցկուէ՛ —
բանտումն, մեռանի 'ի խղճուէ՛։

Թէպէտ հարսնիք է պատրաստած
փեսայն հարսի առաջը կայնած,
գեղեցկութիւնըն զմայլած
բայց խոր մտքումն է ընկղմած։ —



Օրն ուրախացած, թռչունք երգեն
երկինքն արեգական ցօղով փայլէ,
մինչև այն ձայնըն հասնի բանտին
տառապեալ հոգւոյն մ՚լ կազատէ։

Նո՛ն չունի ոչ կամք ոչ ուրախութի՛
և չէ պէտք ոսկի թանգագին,
նա մուղարրար փառաբանուի՛
տալիսէ Ա՜ծյ առաջին։ —

բայց այստեղ!......
ծանր դարեր!......
Ո՛վ դու քաղաք անբախտացած
քո նոր երգիչ սոխակն,
այն անլուսին գիշերն չանցած
ուրախ երգէ վարդի տակն։ —

Թող քո մթնած արեգակն
լուսաւորէ և մեր բակն,
թող իւր առատ ցօղերովն
անցնէ այս անբնակ տեղերովն։ —

Գիտեմ կային անցեալ տարիք
ընկերք մարդկանց ազատուէ՛,
այժմ լի է տուն քո չարիք
և չիք նշան ինչ բարուէ՛։

Թէ փափագով մօտըդ գամ
երկիր ու հողըդ տեսնեմ,
պէտքէ իսկոյն յետ դառնամ
յաւիտեան քեզնից զրկուեմ։ —

Հոգիս տկարէ ! . . . .
Ուրախութի՜ սպասելըս զուրէ
Մնացի աղքատ-անդ ուրախութե՜ն,
դուռն ինձ համար միշտ բացէ
որէ և դուռն արքայութե՜ն: —

Արեգակն բացաւ ցօղերն
քաղաք ու գիւղ և տներն,
աղքատութի՜նից հեռիեն
և ոչինչ բանի կարօտ չեն: —

Նայիր Վասակ այս քաղաքին
հիմա նա փառքով-հարուստէ,
Ի՜մ օրինակ այս վանքին
որ աշխարհումըս միհատէ:

Ահա թնդեց երկինքը
դռները փակ-բոլորը հանդարտ,
չեն լոյս տալիս աստղունքը
մութնէ! ոչ տաքէ ոչ ցուրտ: —

Լսումեմ ականջըս ձայնէ տալիս
տեսնումեմ այն աղջիկն ինձ մօտէգալիս,
ահա հազիւ ինձ նա տեսաւ,
իսկոյն շտապով հետ դարձաւ: —

Ուզեցի ես յետիցն երթամ
աղջիկն ո՞վ է ես իմանամ,
բայց վախեցայ զուր սպասեմ
ասի լաւ է երթամ քնեմ: —

* * *



Բանտարկեալ: —
Ինձի տխուր բանդն է նեղում
շղթայն ոտներըս է քերում,
և լսումեմ իբր երազում
երկինքն մթնած, անձրեն վազում: —
Քամին ծառերին օրօրումէ
և զանազան ձայներ հանում,
այս բանտումն ուր կեանքս է անցնում
մի ինսանի ձայն չեմ լսում: —
Երկնային այն լուսատու ջահքն
չեն ուզում ինձ լուսաւորել,
միայն այն տխուր ագռաւքն
պատուհանումըս կուգան երգել:
Կա՜ թէ երկնից կայծակն
ինչպէս կրակ անցկենայ,
որ մեր երկրի գնտակն
նր՛ա զօրքն գիտենայ: —
Ինդուր էլ ես սպասումեմ
թէ երկնային կայծակն այն,
գուցէ մէկօր կտեսնեմ
որ կտըրտէ իմ շղթայն: —
Կրկին կերթամ առաջուանպէս
քաղաք ու գիւղք տեսնելու,
նորէն կուզեմ ձգել մտքէս
այս իմ շղթայն մահացու: —

* * *

## Սպատիչ։

Երբ Թաղուած մեռեալքն ողջանան
Գաբրիէլեան փողն փչէ,
և մեղաւոր ու անմեղք առ Ա՟ծ ընթանան
լինի վերջին օր, վերջին դատաստան։
Երբ երկնային ահեղ Դատաւորի դէմը
մոլորված մարդիքն կուգան,
և ամէն հարցմանց պատասխանը
Նորա դատաստանին կուտան։
Յայնժամ և դու ով Հայաստան
մանկութեանըս բնակարան,
ուրիշների հետ միասին
կուտաս պատասխան հարցմունքին։
Թէ լինի քեզ դառն դատաստան
աներևոյթէն, փոքրիկ բուրաստան,
քեզի ազատիչ կուգայ քաջ Վարդան,
քո մանկանցը կլինի օգնական։ —

* * *

## Զրոյց ընկերոջըս։

Քնիցն քաղցր ով ընկեր
քեզ հետ զրուցելն է կարծեմ,
Թէ ինչու եմ ես տխրեր
ահա Թող քեզի ասեմ։ —
Վիրաւորուած եմ իմացիր
բայց վէրքերըս չէ ինձ այրում,
ես Հայոց արիւնն եմ ցաւում
որ Պարսկաստան են Թողեր։
Չկարծեմ որ, դու էլ եղբայր
հայրենիքըդ մոռանաս,
դու էլ կլնիս որդւոց հայր
սէ՟ր հաւատըդ չուրանաս։
Մի ժամանակ միտքըդ կառնես
Աստ հայրենիքս է իմ սէ՟ր,



և գիտեմ որ կփոշմանես
Թէ հայերին տեսնես որբ։
Գիտէնամ դու ինչ գին կուտաս
նախահարց մեր ցաւն լսես,
տարիներով պահէին պաս
և կեանքըներըն արեցին կէս։
Թշնամեացն հալածելով
արեան մէջն զարդարուելով,
Հայաստանը ազատ արին
և սէ՟ութեան արժան եղին։
Յիմա ինչէ մեր օրերըն
ահու ցաւն է մեր տէրն,
որդին մոռացելա հօրը
աղջիկն ուրացել մօրը։
Աղօթէ՛ր ընկեր, աղօթէ՛ր
մինչև գերեզմանըդ մտնես,
դարձի՛ր եղբայր, դարձի՛ր
Թշուառ է Հայաստանը տես։
դարձի՛ր և դառ հողիդ մշակ
որ տրնկիքը ծիծուն չուտի,
խրատէ՛ր դու, հայրենակ
քաղաքները հովիւ չունի։

* * *

1.

Թուի՛ր, Թուի՛ր իմ գեղեցիկ
և աննըման աղաւնի,
շուտով հասիր ուրմիհատիկ
նազելիս իմ մեռանի։

2.

Ասա որ իմ անխախտ սէրըս
չի պակասիլ նորանից,
Թէ որ ապրի-էլ իմ տէրըս
նաէ-և ինձ յարակից։ —

3.

Ասա որ միշտ այն պարտիզում
ուր նստել մենք սիրէինք,
ես արտասունքըս եմ Թափում
աչքըս ցըցած դէպ երկինք։

4.

Այն քաղցրաձայն տխակները
այն տեղիցն են հեռացել,
և պարտիզի կանանչները
առանց 'ի քեզ չորացել։

5.

Այն քաղցրահամ ջրերի մօտ
ուր ձեռքերըդ լուայիր,
և ծըծերըդ անուշահօտ
կպր աչքերիս քսէիր։ —

6.

Չեն նքա այժմ ոչ քաղցրահամ
և անոյշ հոտ չեմ լսում,
այլ են լեղի և դառնահամ
և քեզ էլ ես չեմ տեսնում։ —

7.

Մի թողնիլ ինձ արտասուելով
թէ առողջես մի մնար, *)
հասիր ինձ մօտ դու շտապով
և իմ սէրըս միտըդ առ: —

8.

Քեզեն մնում ով նազելի
պարտէզ ուջուրք անդադար,
միթէ և իմ անտանելի
ցաւիս չի լինիլ դադար: —

* * *

Գերեզմանանոց:

Թէպէտ գիտեմ, մեռեալ մարդն
չի արթնանալ քնիցն,
բայց ինչանեմ որ իմ սիրտն
զարհուրումէ մեռլիցն:
Գիտեմ որ դուրս քաղաքիցն
օդն միշտ խտակ է լինում,
գերեզմանատունն-ահիցն —
գիշերն երթալ չի լինում: —
Հենց գիտենաս մեռեալները
տեղներիցն են վերկացել,
և փետացած ձեռնըները
դէպ ինձ են երկենցրել: —

Երեխայուցըս է մնացել
այս մոլորեալ մըտքերը,
թէ կանայքն են վախեցրել
թէ մանգուղան մեռեալքը:
Այն անյայտն ինձ յայտնեցաւ
առանց ծածկոց երեսին,
ահ միանիլ ինձի ասաւ —
ոչ կենդան, ոչ մեռեալէն:
Բայց չեմ գիտում այս ընչիցնէ
երբ ծառերըն խըշխըշումեն
սիրտըս փորումըս թռթռումէ
զարմանումեմ այս բանին:

* * *

Գարուն.

Ահա՛ գարունն եկաւ —!
կանանչ պարտիզիցն իմացայ...

*) Թէ չես մեռել.



սարու դաշտեր գեղեցկացաւ
նրա տեսի ես հիացայ: —

Զուր մանուշակի հոտն է բերում
գիշերուայ քամին ինձ համար,
ես լալով ցաւերըս եմկրում
կարօտ մնում չարաչար: —

Եւ դու սէր, պարապուճ ընկեր,
աշխատանքի հետ մնալ չկարեցար
ինձնից լալով հեռացար,
եաղերի հետ ուրախ եղեր:

* * *

Երգ:

Նորա պատկերն չէ արեգակ, տեսած երազն քոյ սուտէ,
նրա լեզուն չէ բուլբուլի, այլ թէ շահմար օձի տուտէ,
նրա ծոցի ջուխտ շամամի, երեսն ուռած մէջն փուչէ
սուտ չեն ասում ուրիշները, թէ սիրողի աչքը կոյրէ: —
Նորա թէ պատկերքնէ սիրուն, ինքն առանց եզերք ջուրէ,
մօտենողն կուայրուի, նա առանց բոց ինքն հուրէ,
աղաչումեմ միհաւատաք, նր՛ լեզուն թրից սուրէ,
թէ կնդրուկէ, և կամ բուրկէն, նրա անոյշ հոտն ուրէ: —
Սէյեադն գրեց, ու հաստատեց, պատկերը ակունքով նշխեց
թէ, «ինջիէ ատամներըդ՝ թամամ Հնդըստանից եկած,» *)
չեմ հաւատում նրն էլ ես, ինձ էլ էս լաքաթէն խաշեց

*) Տես, Նոր քնար Հայաստ" տետրակ Բ երես 37, տող 16.

հենց իմանաս որ պատիժ էր, ինձ Ածանիցն ղրկած։ —
Թէ ինչ չարչարանք կրեցի, էս դունիւմը մարդ չիմացաւ
ասացի՝ թէ վայ քեզ Վասակ, չլնի՝ թէ Տէրն բարկացաւ,
բայց իմ արած ախուվախըս, վերջերումը հէրն իմացաւ
ես մնացի խորովված, չիմացայ անցած սէրըս ուրէ։ —

* * *

Տեսարան։

Հէնց հասասներըն [1]) իրանց տեղիցն հեռանումեն
բազարբաշուն գիշերուայ անցքը պատմումեն,
արժէ, թէ որ կուզես տեսնիլ առաւօտեան ծէքը բացուելիս.
մեծ ու փոքր, ողջ բանի են վազում իրար ասում բարըլիս.

Զարսուբազարն նեղուածքէ, այդ մեղը չէ ոչ ոքի
միայն Սարդար Հասան խանը մեզ համար էր անհոգի,
որին խեղդեց, որին ծեծեց, որին արեց բանփոքի [2])
իր Ալլահը դիւանն անի, թշնամի էր քաղաքիս։

Թամաշայա. ով դաբբաղէ, վազնումէ իր դուքանը,
կամ ով չայչի, աշխատումէ խստակ լինի ստաքանը,
կամ մաշակար, խիստ շտապով մաշիկներըն է դարսում
ով աջ, ով ձախ կամ ով ուղիղ իր ճանապարհն է երթում։ —

Ով բաղդաղէ դազն է հաղրում սպասում
կամ բաղկալն, դախլի փողերն է համբրում,
ով դեղատէր, ղանթարի տակն է վազնում
թէ բամբակն ինչ գնով ծախվի քաղաքիս։ —

---

[1]) գիշերուայ խանութների պահապան։ [2]) բանփոքիանել — սպաննել։



Երևանայ ղանթարին [1]) դրուստն ասեմ դին չունի,
մի կողմն Կոնդն [2]) միւսն Դամիրբուլաղն ունի,
մի կողմն Զորագեղ մի կողմն Խանլըղլաղն ունի
առու ծախսի նշանդեահ իր վրայ բայդաղն ունի։ —

Բամբակների թայերը հազարներով են դարսած
քըրտընքախաշ դեղացիք պատերի տակ պըպըղած, [3])
քթոցներով հաւողը կախանացու են ջոկած
որը դետնին, որը կըշըռքին, որը իշինա բարձած։

Բաղմանները ջերդայ տուած, էտուլները [4]) մէջքներին.
միքիչ դէսը կանգնոտած են որն ծառայ որն աղայ,
բոլորն ղանթարչուն սպասում, նայում իրար երեսին
որասի. «երկու փութ ու միդրուանքայ, քարը վերբեր տղայ»։

Ոչխարարած քրդերը, չալմէքները գլխներին
չոմախները ձեռներին, ղալխանները ուսերին,
Թարաքեամա Պազախն, ցորենը բարձած եզներին
կամ քեասամաս [5]) ու պանիր, սպասումէ նօբաթին։ —

Կամ Իւփեցիք դասդէքով, ըռեխները վեժարած
կուժ, բղուղ, փարչու կճուճ իրանց կշտին մօտարած,
Աղբաշու չալթուկ բրինձն իրար վրայ է դարսած
Եղվարթու էն լաւ ցորեն-ջըւալներումնա կարած։

---

[1]) Ղանթար — Биржа. [2]) Կոնդ, Դամիրբուլաղ — Названіе частей города Эривани. [3]) պըպըղած = сидѣть на корточкахъ. [4]) էտուլ = մի ձև դանակ'է, խաղողի մատն են կտրում նրանով։ [5]) քեասամաս = մածուն։

Օրդուբադու Թուրքերը չամիչու չիր են ծախում
մանդր լակոտք Թաբաղներով ղօղհալվասի են գոռում —
լուլաքաբաբն, տաւարի խաշն, մարդու բերաննէ էրում
էսքան խալխի դըրմբոցիցն, մարդդ անկաջն է խլանում։ —

Կմ Թէ ջառչին բերանը բաց, չարսուներնա մանգալի
էշ է կորել, ով որ քթնի մուշտուլուղա խոստանում,
գեահ գնումա, գեահ կանգնումա „աղբաթի խէյր ձէն տալի։“ —
իշատէրն էլ ետքիցն նոխտէն ձեռինա տնքում։ —

Գանթարի քամակումը սբ Սարգիս և Զօրաբեղնէ
մեր խըշխըշան Զանգի գետի միշտ և բնիկ տեղնէ,
կարմունջի էն երեսը Հասան խանի բաղնէ —
նի միջի վարդ մանուշակն իմ ցաւերիս դեղն է։

Էն նի էլ հարաւ դիհը մասխ սարն է երևում
ձինախառն սառուցներիցն նի գլուխն չի ջոկըւում,
արեգակի շողքերիցն, նա հազար մի ռանգէ հանում
արծաթափակ գլուխն, ինչպէս ալմաստ ակնէ փայլում։ —

Ամեն նի մի պէծն, հէնց գիտենաս լեզու ունի
Թէ ծերացած գագաթը, հիմա մի տէր, իշխան չունի,
սբ Յակոբայ աղբրին էն առաջուան համն չունի
Նախիջևան, Առնյոտն և Արկուան զըկանք ունի։

Գանթարի աջ կողմումը, Սօգիւթլուղնա*) կանանչում
նի միջին էլ դուԹմայ, կմ դոստիջան են ցանում,
կմ Թէ Թարխուն և ռէյհան կմ նիա հունդն են ծախում
տեղ՝ տեղ նստած կնիկ աղջիկ մարկերն են քաղհանում։ —

*) Սօգիւթլուղ = ուռի ծառանոց, այժըմ Թագաւորական Անգլիսկի սադ։



Միւս կողմը ինչ մէյդանա, միջին հաւուզ, բաղէ շինած
էնտեղա դատաւորն, դատաստանն և Թէ մէջտեղն քաղաքիս.
հիմիկուա դէմքը քուչէքանց հաղիւ պլանովէ քցած —
կարգ ու կանոն, դատաստան, քաւլէցի իսպառ քաղաքիս։

Փողովուրդն դողումեն դատաստանի ահիցն
մեծ դատաւոր մարդիքն լաւ խաբար են յարքիցն,
ով որ կաշառք չիտալիս դուրս չեն Թողում բերդիցն
Թող նա փԹի ասումեն, անցակացել ջանիցն։

Երևանը մեծ տեղ չէ, խիստ պտղաբեր հողեր ունի
չորս բոլորը դատարկ չէ, հասար կապած բաղեր ունի,
նա խիստ հինուց մնացած, իրան համար անում ունի
բայց ինչանեմ ցեցն իրնիցա կաշառքակեր շատ ունի։ —

Ով որ մի տեղէ ստանում Թէ Պրիստաւի կմ Մովրով.
պէտքէ որ փէշքաշ տանեն, ոչխարու եզն կմ Թէ կով,
վայ էն խեղճիկ գեղըցուն, որ Մովրովին դայ չիբերիլ
վայ էն քասիբ քաղաքցուն, որ Պրիստաւին փայ չիբերիլ։

Վայ էն գեղըցու հալին, որ մահասիլ էկած վախտին
ճար ու նաչար նի համար մի հատ վառիկ ճուտ չի մորԹիլ,
աղրայիլի պէս կայնած, ձեռին բռնած մեծ լախտին
ճուտի տեղակ գեղըցու կաշինա ուզում քերԹիլ։

Որն ասեմ, որն պատմեմ, Թէ լաւ շատէ, վատնէլ քինչի
միտքեմ անում Թէ արդեօք զօրուԹեամբն Արարչի,
այս չարաչար նեղուԹիքն երբ մեր գլխէն կկորչի
երբ կլսենք դատաստանը ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԻԿՈԼԱՅԻՉԻ։

* * *

## Յանկարծախօս բան.

Թէ դու սխտոր չես կերել, բաս էդ հոտը ինչ նշանէ,
Թէ դու տէրտէր չես եղել, էդ միրուքըդ ինչ նշանէ,
Թէ ուղտապան չես եղել, բաս չոմախըդ ինչ նշանէ,
Թէ գիւղացի չես եղել, ոտիդ տրեխն ինչ նշանէ, —
Դումըս ծածկուած կենալն միանգամայն գողի բանէ: —
Թէ ով ես դու կմ ինչարած Թագցընելըդ ինչ նշանէ: —
Լսի՛ր, աշխարայ ապրիլն, հաստատումեն անգին բանէ,
ա՛րի տրեխ մի՛ հագնիլ, ինձէս խառնած մուքէս հանէ,
քու ցաւերըդ ինձ հետ կխսիր, հոգիս կարօտուի չանէ,
այդպէս լըբաս հագնիլըդ, ասա՛ տեսնեմ ինչ նշանէ: —
Հայես, Թուրքես, կմ Ասորի, շուտով պատմիր ով երիտասարդ
Թէ ինսան ես ջուղաբըս տուր, բայան արա քու դարդերդ,
միգուցէ Թէ ղափիլ տեղըդ դու պատահիս չար սատանի,
պատմի՛ր եղբայր աղաչումեմ, մի Թող հոգիս շիւան անի.
բաս Թէ վախեցած չես դու, էդ հեԹհեԹալդ ինչ նշանէ: —
„Ինչ է ցանկացածնքդ, որ պատասխան ես պահանջում
„իմ ցաւն ինձ բաւական չէ, դու էլ ես ինձի չարչարում,
„ինքըս Հայեմ անճարացած, Հայաստանի օրն եմ ցաւում
„Արտաշիրու *) բնակիչեմ, Սեւանայ ես վանքն եմ գնում
„այս գաւազան ու տրեխը, աղքատուԹեանս նշանէ: —
„Ուղտապան՝ ես չեմ եղել, այլ զօրական Հայազգին,
„Թշնամիքն մեզ քշեցին, որին սաղին որին անգին,
„քաղաք ու գիւղ չմնաց, անխղճմտանք Թալնեցին
„մեր սիրելի երկրեցն մեզ գաղարգիւն արեցին
„երկայն միրուք Թողալըս, անտէրուԹեանս նշանէ:" —

*) Արտաշատ հիմա Արտաշիր գիւղ.



Մի նեղանալ ով զօրական, Հայոց ազգի պահապան
աչքըս կոյրէ չեմ ճանաչում, Թէ ովէ ինձ պէտքական,
պլաղղայ մէջն եմ մեծացած, հեռի տնից հայրական,
իմ անունըս Հայ Վասակէ և իմազգըս ՄադաԹեան,
իմ Հայրենիք չպատուելըս կուրուԹեանըս նշանէ:

* * *

## Ասումեն Թէ:

Ասումեն Թէ մարդիքն դիփ հողիցն են բհամ եկած
բաս ինչո՞ւ, մէկն սիրուն, մէկն տգեղ, մէկի ռանգնէ դեղնած,
որն աղքատ, որն հարուստ, որի շլինքը փորն ընկած,
ոմանք նազուք, ոմանք ազունք, մեծ անուան տէր ծնողաց
հո՞ղնէ ուրիշ, ջո՞ւրնէ ուրիշ, որ այդպէս են բաժանուած:

1010
40850

Ասումեն Թէ մենք Աստուծոյ պատկերն ունինք
ուրեմն մէկմէկու մենք պիտի որ նման լինինք,
բաս ինչիցնէ, ես ու դու իրար նման ոչինչ չունինք,
դու զարդի մէջ, ինքըդ սիրուն, իրար հետ հէչ սաղ չունինք,
հո՞ղդ է ուրիշ, ջո՞ւրդ է ուրիշ, որ այդպէս ենք բաժանուած:

Ասումեն Թէ արդարքն արքայուԹեանն արժան կլինին
իսկ մեղաւորք դժոխքումն այրուելով քիւլ կլինին,
Թէ բոլորին միտեղ տանեն, բաս էդ բանը ո՞նց կլինի.
զուր մի ծածկիլ, քու ցաւերըդ խալխի միջին չաւ կլինի,
հո՞ղդէ ուրիշ, ջո՞ւրդէ ուրիշ, որ այդպէս ենք բաժանուած: —

Ասումեն Թէ մի հրաշալի կլինի դատաստան մեզ համար,
շատը կերԹան դժոխքի մէջը, շատը փայեն դրախտի համար,
Թէ խելք ունիք, լաւ միտք արէք, ամեն մարդ իր բախտի համար,

*

խիստ ահալի են ասում Գաբրիէլեան փողի համար,
հո՛ղն է ուրիշ են . . .

Ես էլ գիտեմ քեզ նըմանը, առաքինեաց դասն չունի.
Արքայութեան „[illegible]“ բնաւ երբէք մասն չունի,
աղքատ մարդուն ողորմելու քրիստոնէի սէրն չունի,
քեզ պէս մարդուն տեսնելու աչք, մեր Արարիչ Տէրն չունի:
հո՛ղդ է ուրիշ են . . .

Արտասունքըս արնախառը վերաթափւում ինչպէս գետ,
հարիւր բերան ես ասացի, այժըմ դառաւ լեզուս փէտ,
դիփ էնդուցէ վախենումեմ, դատաստանին մնամ կենտ,
ինձ եաղիցն ինչ օգնութիւն, երբ որ, „[illegible]:“
հո՛ղն է ուրիշ են . . .

* * *

1.

Աշխարհն հիմա փոխարկուել է
մարդիքն էլ այն չեն,
երկիրը լուսաւորուել է,
և յիմարքն խիստ քիչեն: —

2.

Ամեն մի ազգում անելիս
խաբեբայ մարդ կտեսնես,
թէ ամենին բարի կամիս
պէտք է ջիբըդ պահպանես: —

3.

Հիմիկուայ աղջիկ ու հարսները
երեսբացուկ չեն ուզում,
ջահել տղոց նամակները
սանդուղներումն են պահում: —

* * *



Ժամանակ:

Ինչու պատկերըդ ծերացած են քաշում
բոց սպիտակ մազերով երեսդ նախշում,
երբ քո ուսերքումը մատղահաս
թև ու փետուրքըդ է նորահաս: —

Ով անհոգի ժամանակ, կուրացած ժողովուրդըդ
ուղղութեան ճանապարհն, փնտռումայ կամքովըդ,
և յաւիտեան չարչարանքն ուսին
օր ու գիշեր, անցնումեն մին մին: —

Խղճալի Հայերը օր ու գիշեր կեանքեն մաշում
քո ահարկու ժամերիցն, անմխիթար ցաւեն քաշում,
վա՜յ մեր գլխին ասելով, գերեզմանի քարեն տաշում
հեռացի՛ր դու անաստուած անմխիթար ժամանակ: —

Թևերըդ թափտալուցը, մի խէյր խաբար չեն լսում
հոգիքները Վասակի պէս, արեգական լոյսչի տեսնում,
որբ Հայաստանի աղօթքը առ Տէր Ածն չի հասնում
հեռացի՛ր դու ատելի, անմխիթար ժամանակ: —

* * *

1.

Երանի նորան, ով դարդ չունի,
երանի նորան, ով պարտք չունի,
ով աւերուած անուն չունի,
երանի նրն, երանի նրն, երանի:

2.

Երանի, ով միտքը փակ չունի,
հարամակեր աչքը չունի,
սատանութեան լիբաս չունի,
երանի նրն, երանի նրն, երանի:

3.

Երանի նրն, ով կին չունի,
և առնելու էլ միտք չունի,
ով ձրի հաց ուտող չունի,
երանի նրն, երանի նրն, երանի։

4.

Երանի, ով սիրած չունի,
ով իշի պէս դամաղ չունի,
տխմարաց հետ արա չունի,
երանի նրն, երանի նրան, երանի։

5.

Ով մի աղքատ զրկած չունի,
Հայի արիւն խմած չունի,
Աստուծուց աւել, նա Տէր չունի,
երանի նրն, երանի նորան, երանի։

* * *

## Հրաւէրք։

1.

Արի սէր իմ, աղնիւ պայծառ
արի ուշու միտքըս դու ես,
որտեղ գտնեմ քեզպէս միծառ
իմ կանաչած ծառըս դու ես։

2.

Քեզի պէսն էլ չի բնիլ
ոչ մի երկրում նազելի,
դեմքիցըդ ինձ զուրկ մի անիլ
արի սիրոյս տէրը դու ես։ —

3.

Գիշեր՝ ցերեկ միտք եմ անում
Թէ իմանամ, ումնման ես,
արի, հոգիս դարդէ անում
լոյս ու արեգակըս դու ես։ —

4.

Չկայ, չկայ ոչ Հնդըստան
ոչ Չինըստան ոչ Փարէզ,
չի պէտք ինձի այդ դատաստան
արի, սրտիս շողը դու ես։ —



5.

Մեռնումեմ ես հալըս կորած
շատ ժուկէ, որ ինձ թողելես,
Պսակդ եմ քեզնով ապրած
արի, գարնան վարդս դու ես։ —

* * *

## Որբեցութիւն։

1.

Որբեցողի կեանքն անիծած
դադար չունի ոչ մի ժամ;
գիշեր ցերեկ նա գիժարած
գինումն է գտնում միայն համ։

2.

Պախտ կերած է, վախտ սոված
հագի շորն ծոթրոտված,
նորա կեանքն անցէ կենում
դուքաններումն շնթռնած։

3.

Թէ եղածէ ուննոր մարդ
հիմա նորա հալը տես,
թէ եղածէ անփիքր ու դարդ
հիմա դու նորա փալը տես։

4.

Ոմանք կնիկ, որդիք ունին,
կամ թէ հազար մի ցաւ ունին,
չգիտեմ թէ ինչէ արել
որ գինուն են մայիլ եղել։

5.

Տուն ու տեղն թողած անտէր
իրանք ընկած լօթութինումն,
թող նոցա պէսն չլինի „հէր“
լաւ օր չունի իր կեանքումն։

6.

Կամ թէ խղճուկ մէրն է սպասում
արտասունքով դուքը թրջում
որդին խալխի տներումը
շան ու գիլլի է կենաց լըկում։

7.

Ով գինի դու համով գինի
ոմանց կեանքին դու լաւ դեղես,
ոմանց գիտեմ ազատ հոգին
բաժակումըդ չարչարումես

8.

Ինսաֆ չունես միթէ դու հէչ
ողորմիր դու խալխին մի քիչ,
էնպէս արա ուրախ լինեմ
երգերումըս միշտ քեզ գովեմ։

* * *

## Գիւլլուզար և Մարջան. [1])

Հողըս գլխիդ Գիւլլուզար՚, քա՛ էդպէս էլ բան կլի
հէնց գիտենաս աշխարհը՚ ալան Թալան էլած ըլի՚,
Ճարակտրուկ մի միտք արա՛, բաւքու վերջը ո՞նց կլի
խալխի չէմքը լիզելով՚ քու տաշտումը հաց չի ըլի ։ —

Խալխը քոմմա [2]) մարդ են ճարում նոր տուն ու տեղ են ըլում
պանիր ու եղ, խիարաթըլթու բըղուղներն են լցնում,
մենակ դու ես, շալըդ գլխիդ ռեխըդ վէժ, ղաւղակ
սալլախանի շան պէս, պարապ քուչէքն չափում ։ —

Զորագեղցի Հէրապետը, աչքիդ եղընա առել
մեր Կոնդի դարըվերը, ջրիդ ճամբայ ես շինել,
ուշումիտքըդ նրանումայ նրա լաւանդ սփաթին
ես չեմ գիտում ինչնա մատթահ, որ նրան ես հաւանել ։

Արի՛ տամ քեզ մեր Պետրոսին, դու բախտաւոր կլինես
համ տուն ունի, համ դալմումը մի՛ լաւ բաղ,
ինքն հարուստ, հէրն ու մէրն գլխին սաղ
արի՛ բալամ անգաջ արա, դու քու բախտը փորձի տես ։ —

Քա՛ մրգամ [3]) ձեր Պետրոսի, ինչնա աւել նրանից
„բոլայ [4]) փտնես, ո՞նցա գալիս ղիմիշըդ,
„արար աշխարհ իրար դիպչի յետ չիմնում դուքանից
„Հէրապըրտի մի ոտին էլ, չարժի դաբբաղ Պետրոսըդ ։“

[1]) Գիւլլուզար և Մարջան = կանանց անուանք են ։
[2]) Քոմմա = բոլորեքեան ։ [3]) մրգամ = արդեօք ։ [4]) բոլա = բաւական ։



Անրծւես դու Գիւլլուզար՚, զոռով հօ չեմ քեզ տալի
հէնց իմանաս Պետրոսի՚, աչքը քեզ հըմա էր լալի՚,
ասումեն թէ վատութիւը՚, լաւութիւն իր օրումը տեղ չի տալի
ընդուր էլ դու՚, քու ըմբրումը, օր կքաշես էդ հալի ։ —

* * *

## Գանգատ ։

Ինձ ասումեն՝ առաջուան դէմքըս չունիմ ամենևին.
իբրև, էն սաթի պէս աչքերըս են մթնած,
ինչ անեմ, մնացելեմ անճար նորա ձեռքին
մի հոգի ունեմ, էն էլա ծախուած ։ —

Ինչ անի դէմքըս, որ չ՚պլակերպուի,
ինչ անի սիրտըս, որ չ՚չարչարուի,
մի մարդ, որ ինքն իրանըն չընի
յայտնի է նորա դէմքը ինչ կլնի ։ —

Ով մարդ, թէ Ն՞ն անունը կսիրես
քո լսած, տեսածըդ ուրիշին չասես,
ինձ այս երկրումը դու բէդնամ չանես
գիտեմ, որ դու էլ սիրած կլինես ։ —

Ասումեն՝ մօտիկ հարևան [1]) սիրելը
ինսանի սիրտնա քարուքանդ անում,
հեռու տեղերումը դերւելը
ոչ սիրտ, ոչ հոգին, օր չի տեսնում ։ —

[1]) հարևան = դրացի ։

Սիրելեմ հարևանիս չգիտեմ ընչիցնէ
վախտ նրանից փախչումեմ, վախտ առաջն կորում,
վախտ մազերըս շաղտուած, մօտիցն եմ անցնում,
կամ երեխի պէս ասում „նա իմ սիրածնէ։“

Շատ անգամ վարդից դաստայ եմ կապում
մուքումըս նորա համար եմ պահում,
կանանչած դաշտումն նորան սպասում
ու մնում կայնած . . . .

Օգնեցէք ինձի, ով մարդիք բարի
իմ աշխատանքըս 'ի զուր փչուեցաւ,
ահա լրացաւ մի բոլոր տարի
որ իմ սիրածըս ինձնից հեռացաւ։ —

* * *

Օտար ճանապարհորդ։

Ողջոյն ձեզ եղբայրք, ողջոյն ձեզ աղէք
խնդրումեմ ձեզնից, ինձի ներեցէք,
օտար ճամբորդեմ այս ծառի տակին
հանգըս առնելու իրաւունք տուէք։ —

„Համեցէք եղբայր բարեաւ դու եկիր
„աւել պակասին խնդրումենք ներիր,
„Թէ քրիստոնեա ես, մեր հացին նստիր
„որդուց և ուր մեզ երթալըդ պատմիր։“

Աստուծ ձեզի միշտ օգնական լինի
սեղան Աբրահամու ձեր սեղան լինի,
որ օտար մարդուն չէք թողում կարօտ
ուր երթալս ասեմ ձեզ, ահա կարճառօտ։ —



Տանուտէրն եմ, Մաքրավանք գեղի
Երևան կերթամ խնդիրքըս յայտնել,
Թէ Մոլրովի օգնականն այս տեղի
կաշառք ուտելով, մեզ օր չի տալի։ —

Ահու, ամօթու, մնացելենք մենք խեղճ
էլ կնիկ, աղջիկ, չմնաց, գեղին,
որ, կաշառք չտան, չհասնեն բանին
Մոլրովին դանկտինք, բայց մնաց անվերջ։ —

„Վայ խեղճ գեղացիք, վայ ձեզ ժողովուրդ
„ուր են ձեր անցած անդարձ օրերը,
„անաստուած Մոլրով կամ իւր օգնական
„ձեզի անումեն այդպէս դատաստան։ —

„Գնացէք քաղաք, շուտ շտապեցէք
„մեծ դատաւորին մին մին պատմեցէք,
„Թէ ինչէ ձեր օր և ինչ քաշեցիք
„դուք նորա առաջն յայտնի ասացէք։ —

„Գիշեր ու ցերեկ Աստուծ կանչեցէք
„մեծ ու պստրկով, աղօթքի կայնէք,
„սբ. Գեւորգ, Մուղնուն մատաղ խոստացէք
„էդ պատիժներն անցնէ ձեր վրայէն։“ —

* * *

Խրատ։

Աղօթիր երբ քո բանըդ աջողակէ,
Բաւ եղիր, բախտովըդ էլմի հպարտանար.
Երբ նեղութիւնն քեզ չարչարէ

Սիրտըդ ցաւիցն լինի տկար.
Սպասի՛ր, յուսա՛ և աղօթի՛ր։

Երբ թշնամիքըդ քեզ հալածեն,
Ընդ ուժեղին մի՛ պատերազմիր.
Տուր նոցա թէ զինչ խնդրեն
Եւ կրկին դու մի մեղանչիր.
Սպասի՛ր, յուսա՛ և աղօթի՛ր։

Թէ չարքն քեզնէ չհեռանան,
Առաջըդ եկած անբախտութենն բարևի՛ր.
Համբերութիւնիցն եղի՛ր անբաժան
Բաժինըդ դու երկնքիցն ստացի՛ր,
Սպասի՛ր, յուսա՛ և աղօթի՛ր։

Երբ արեգակն մթնած տեսնիս,
Բնաւ դու մի երկմտի՛ր.
Մէկ օր պիտի հողն մտնիս,
Բնութիւնն է հրամայեր.
Սպասի՛ր, յուսա՛ և աղօթի՛ր։ —

Երբ որ բնութեան կամքիցն,
Անձրևն չի դադարիլ.
Չզարհուրես այդ ահիցն,
Էլ ջրհեղեղ չի լինիլ.
Սպասի՛ր, յուսա՛ և աղօթի՛ր։ —

Երբ քո սիրտըդ խոցոտ լինի,
Տիւ և գիշեր աղօթի՛ր.
Մի՛ թողուր, որ պղտոր լինի.



Միշտ սրբութ՛ խստակի՛ր.
Սպասի՛ր։ յուսա՛ և աղօթի՛ր։ —

* * *

Խաղացինք մենք խեղճ բախտի հետ
անխղճմտանք և անսէր,
պատահեցինք նոր բաժնի հետ
անհամ եղին հին բանէր։ —

Մինչև նորան ես սիրէի
հոգին ինձ մօտ խնդրուէր,
ամէն բանին հիմա վերջէ
սրտի դուռն էլ է փակուեր։ —

Արտասունքով բարձի վերայ
կուլայ և անդ կու ննջէ,
ահա՛ դու տես ինչէ հիմա
խղճի սիրտն է կոտրուեր։ —

* * *

Յետ մահուան Հ....ի։

Իմացի՛ր դժուար օրերըս
այսօր ՚ի գերեզմանըդ տեսի,
ինքըդ ինձնից խիստ հեռիես
բայց պատկերըդ յայտնի տեսի։ —

Դու միշտ յոգնած հոգւով, մարմնով
՚ի զուր չարչարանք կրէիր,
և ինձի դու լռուած բերանով
միշտ դու քո տանըդ տեսնէիր։ —

Այն քո մթնգած մազերըդ
ոչ ուրախութիւն, ոչ ծիծաղ,
և ոչ առաջուան սէրըդ
չէր ընդունում, ոչ մի ցող:

Երբ քեզի ես 'ի միտ առնէի
միշտ ես ուրախ լինէի,
և երբ, որ դու դագաղ մտար
իմ սէրըս քո հետ տարար: —

Այն օրերըս կորսուեցան
մեղաւոր եմ ինձ ներիր,
գիտեմ այդ էլ չէ բաւական,
անցեալն էլ չի երևիր:

Այն երազէր իմ տեսածըս
հիմա որ թանգէ ինձ համար,
անցած օրին գին չարի ես
որ հոգւոյս էր հաւասար:

Ինչու կեանքըս փուչ անցուցի,
ինչու գինըդ չիմացայ,
եւ քեզի ես զուր կորսուցի
ահա այժմ իմացայ: —

* * *

Անցեալ օրեր:

1.

Այո, կային խիստ լաւ օրեր
երբ, առատ ապրէի ես —
ունէի, և էկամուտներ —
բոլորին էի սիրելի ես: —



2.

Ես վերջինըս բաժանեցի
իմ սիրած ընկերի հետ,
եւ քսակըս դատարկեցի
և ընկերըս դարձաւ յետ:

3.

Այժմ հիւանդ կողինքիս մօտ
ցուրտն է ձմռուան հնչում,
գիշերները արտասունքըս
մի բարի, ծէր է սրփում: —

4.

Լինումէ, որ և երազիս
այն լի տունըս եմ տեսնում,
և իմ չարչարուած սրտէս
ուրախութիւն է բղխում:

5.

Հանկարծակի տխուր ձէնըն
քաղցր քունս է փախցնում,
արըշտտումէ այն ծէրըն
և երեսին խաչ հանում: —

* * *

Մի՛ ասէր թէ ջահելութիւնըս
բաղտիտ դուռն է փակեր,
մի՛ ասէր, մօտ է գերեզմանըս
Բայց դու մանուշակ, տերևըդ նոր ես բացեր:

Այն օրն երբ ինձ սիրեցիր
ինձնից էլ լսեցիր, սիրեմ.
մօտէ գերեզմանըս մի անիծեր,
Բոլորն, բոլորն, մահօվըս կուղղեմ: —

Մի՛ ասէր թէ օրերըդ անցել է —
հիւանդին բանտապետ մի՛ կարգիլ,
իմ առաջըս գերեզմանի մութն է
Քո առաջիդ, սէրն է ծիլ ծիլ: —

*

Գիտեմ դու ուրիշին ես սիրել
Թոյլ մտքերը չեն թողնում քեզի,
աղաչումեմ գերեզմանս է մօտացել
Սպասիր, թող սկսածն բաղտն վերջացնի: —

* * *

Կորուսեալ ճնճղուկ:

Լացիր, լացիր, դառն լացիր, էլ չես գտնիլ դու նորան.
Նորան գտնիլ, ուրախ ժամիդ, թէպէտ դու ինձ խոստացար.
Բայց նա նոյնպէս անյայտացաւ, ինչպէս սէրն,
Որ նորա փափուկ սրտումն դու գտար: —
Յանձնած էր նորան քո սրտի խաղերն,
Բայց այժմ, բոլորն միասին ոչընչացան.
Էլ չի երևում այն շաղ տուած մազերն,
Եւ քո ջահիլ ժամերըդ հեռացան: —
Այժմ թող կեանքն նոցա սուտ անուանի,
Խօսքերին էլ թող իմ չհաւանի: —

* * *

Հոգիս տկար է տկար,
հանքըս չի ուզում դուրս գալ,
միտքըս լուռ է և անճար,
անքնուիը չէ կամենում ժամանակ տալ
ցաւի հետ միատեղ, եղին ինձ իշխան: —

Ինչու եմ ես անխելք սիրում
չեմ դադարում դիմամարտիլ,
սէր, մինթէ ուրիշ ոչինչի չեմ արժում.
որ, սև ցաւն միայն ինձ ես տուել: —



Թէ այդպէս է չեմ սիրիլ կթողնեմ,
հոգւոյս չարչարող ցլաւերին,
և սրտիս չսիրիլ կհրամայեմ,
մտքիս էլ, ճանապարհներն կփոխեմ: —

Բայց դու սէր, քրթամակեր Յուդայ ես դարձել
անողորմբար ինձ տիրելես,
խղճայ, մոլորված եմ մնացել
խղճայ և ազատիր ցաւերէս: —

Հոգիս տկար է տկար,
հանքըս չի ուզում դուրս գալ,
միտքըս լուռ է և անճար,
անքնուիը չէ կամենում ժամանակ տալ,
ցաւի հետ միատեղ, եղին ինձ իշխան: —

* * *

Երազ:

Երազիս ես քեզի լայի,
Իբրև թէ դու մեռեալ էիր —
Արթնցայ, աչք իմ թրջուած
կողինքս արտասուօք լուայի:

Երազիս անսփոփ լայի,
Իբրև մոռացելիր դու ինձ
Արթնցայ դեռ ես ողբայի,
Ոլոռն, ոլոռն, արտասունք թափէի:

Երազիս փափագմամբ լայի,
Տեսի միասին ենք կրկին,

Արթնցայ, անդադար լայի
 Աչքերէս թափէր ցօղագին։

Երազ տեսի մեռեալ էի,
 Առօք, փառօք դագաղ դրած,
Դի գերեզման ես մտնէի
 Քահանայիւք շրջապատած։

Ինչքան տևեց ես չգիտեմ
 Երազըս իմ գերեզմանի,
Արթնցայ ես, և լսումեմ
 Ձայն ինձ ծանօթ և կենդանի։

„Վէր ել Վասակ գերեզմանէդ,
 „Վէր ել հոգեակ իմ անուշակ
„Գլորիր քարն քո վրաէդ
 „Ոտքիդ կայնիր իմ մանուշակ։“

Սիրած ընկեր, ինչպէս ելնեմ,
 Աչքըս կուրէ մթնիցն —
Շատ լալուցն ես այրելեմ
 Աչքիս լոյսը, բուխարիցն։

„Վէր ել Վասակ՝ համբուրելով
 „Ես լոյս կուտամ քո աչքերիդ,
„Վէր ել կայնիր ինձ նայելով
 „Ինձ որ, կարօտ եմ երեսիդ։“

Սիրած հոգեակ ինչպէս կայնեմ,
 Սիրտըս ալ վարդ արեան մէջ է.
Առանց կամուրջ ինքն գետ է
 Քու խօսքերըդ առանց սէր։ —



Ես քո հիւանդ սրտիդ վերայ
 Փափուկ ձեռօքըս կմերզեմ[1])
Այն քո սրտիդ վէրքին վրայ
 Ձեռօքըս մհլամ[2]) կդնեմ։

„Ես մազերովըս Վասակ ջան
 „Քո ճակատըդ պինդ կկապեմ,
„Անմեղ արիւնըդ խոխոջան
 „Ես էլի յետ կդարձնեմ։ —“

Այնպէս նուրբ էր, այնպէս քաղցր
 Բարակ ձայնը աղջըկան,
Հարկադրեց ոտքի կայնել
 Մէ աղօթիւք փրկական։ —

Բայց ա՜խ, ցաւըս նորէն դարձաւ
 Արիւնըս վազնել սկսեցաւ,
Աչքերըս իմ կրկին մթնեց
 Ահէն քնէս արթնեցայ։ —

* * *

Երգչին։

Լռէ՛ր երգիչ, լռէ՛ր,
 Բաւէ երգես դադարէ՛ր,
 Օձի տուտի պէսէ ծակում
 Ձայնըդ սրտիս, մի՛ երգէր։ —

---

[1]) փայփայեմ։ [2]) սպեղանի։

Նորան վաղուց մոռացելի,
Երգիչ նախանձ, ատելի.
Դու նորէն ինձ ցաւոտեցիր,
Սրտիս վէրքը բացեցիր։

Գիտեմ՝ ինձ մօտ էլ չի դառնալ
Իմ գարունըս զարդարուած,
Դադարել է սրտիս լալը
Նորա ախով չարչարուած։ —

Արեգակի ցոլեց յետը
Մթնած օր ոչ ոք չի սիրիլ,
Բախտիցը զուրկ, իրան բախտը
Մահից վատէ մտ բերիլ։

* * *

## Որբ։

Ով գլխովըդ կուփարէ, ով երեսդ համբուրէ,
Միայն ես դու, միայն ես դու, միայն, անբախտ աշխարհէ
Օգնութի դու մի ուզիր քո ազգականներիցն
Բնաւ չես գտնիլ նոցա մօտ. գիփ փախչումեն որբիցն.
Միայն եղիր, միայն եղիր, միայն որբ և անտէրունչ։ —

Աղաղակըդ չեն լսում, սէրըդ էլ չեն հասկանում
Միշտ իւրեանց օգուտն են խօսում, որբից երես դարձնում
Թէ չլսես խրատներն, չհեռանաս քո կամքիցն
Յաւիտեան դու չես պրծնիլ՝ նոցա կեղտոտ խօսքիցն
Միայն ես դու, միայն ես դու, միայն, անբախտ աշխարհէ
Միայն եղիր, միայն եղիր, միայն որբ և անտերունչ։ —



Մեր բնիկ մայր, Թաց հողն կայ պատրաստ քեզ լաւ ընկեր,
Ցաւերիդ փարատուն կտայ Փրկիչ Տէրն մեր,
Բայց դի նմանէ այլ ոչ ոք՝ կարէ սփոփանք տալ սրտիդ,
Անտէրունչ՝ այն հողի մէջ, երբ այց գայ գերեզմանիդ
Միայն եղիր, միայն եղիր, միայն որբ և անտերունչ։ —

* * *

## Դի նուէր Օ.....ն։

Հեռի մնացած ես քեզանից
Քայլում էի այս եզերքումը,
Սիրտըս պղտորուած, մտքերիցն
Ուզումէի թէ ընկնեմ ջուրը։ —
Հանկարծ, երկինքն մթագնեց,
Գետը ալիքով պղտորվեց,
Ահու ոտքերըս դող բռնեց
Հեռացայ այս ափերիցն։ —
Այն վաղ էր, որ մեք միասին
Մանգալու աստ կուգայինք,
Եւ մեր սիրոյ բախտի մասին
Այս տեղ նստած կ՛խօսէինք։
Այժմ միակ, մտքիցըդ հեռի,
Հեռի և քո տեսքիցըդ,
Գամ մանգալու պարապ ժամի
Եւ միշտ գոչեմ անունըդ։ —
Նոյն միտքն է ինձ չարչարում
Եւ ջուրն իւրեան մօտ կանչում,
Չի պղտորում էլ իւր տակը
Հանդարտելեն ալիքը։ —

* * *

### Չէ երկնային նա։

Չէ՛ երկնային նա, մի՛ ասեր,
Եւ երկրիցն նորան մի՛ զրկեր,
Նայիր՝ նորա պայծառ աչքերին.
Երկնքով չեն լուսաւորված,
Նոցանում գիշերք երևին
Եւ անցեալ օրերն չարչարուած.
Նորա երկրային գահի դէմը
Ընդդէմ է քո, սբ̃ աղօթքը։
Չէ՛ երկնային նա, մի՛ ասեր,
Եւ երկրիցն նորան մի՛ զրկեր։ —
Ո՛չ նա սբ̃է, ո՛չ մարգարէ,
Այլ մեղացու երկրային,
Ո՛չ քաւիչէ և ո՛չ կարէ
Լինիլ երբէք երկնային։
Բայց՝ նորա աշխարհն այլէ՛,
Աշխա՛րհ միայն ակնատես,
Ուր հաւատն միշտ շիջածէ՛
Եւ սէրն առատ, ծովու պէս։ —
Չէ՛ երկնային նա, մի՛ ասեր,
Եւ երկրիցն նորան մի՛ զրկեր։ —

* * *

Պատասխանի հարցմանն, — Որդ է լոյսն, յո՛րմէ բուրէ հոտն։

Մի՞թէ այդ չէ՛, երկնային լոյսը
որ երեսիդ է ցոլում,
և թէ ո՞յն չէ՛, անոյշ հոտը
ինչ ծըծերէդ է բուրում։



Այդ է աստղիկ իմ աննըման
հոտով շուշան իմ ծաղիկ,
այդ է, տատրակ իմ գեղեցիկ
այդ է, անմեղ հոգեհան։ —

Թո՛ղ, որ փչէ անոյշ հովը
քո ծըծերէդ ամեն ժամ,
Թո՛ղ, որ կանչէ իւրեան քովը
ինձ այդ լեզուդ կաթնահամ։ —

* * *

### Անցք կենաց։

Հարուստ էի և ունևոր, այժմ աղքատ՝ լալս իմացէք,
Գիտուն էի տխմարացայ, հիմա դարդոտ հալս իմացէք
Աղքատաց տէր և օգնական, և միշտ առատ սեղան տեսած
Այժմ անկած մի անկիւնում, սոված լըքըլըքալս իմացէք։ —

Երբ անճար և աղքատ ընկայ, բարեկամքըս ինձի թողին
Իւրեանք դարձան մեծ կայքի տէր, պռունկսըրվէր ինձի թողին,
Որին գնամ, ում դանդատեմ; չքաւորք ինձ չեն ճանաչում
Իսկ հարուստք և իմ ծանօթքս՝ ափսոսումեն իւրեանց փողին։ —

Հարստութեանըս գեա՛լ-հա՛-գեա՛լին՝ փառք ու պատիւս էր աւելի
Ձորս բոլորըս պարիսպ կապած՝ ոմանք ընկեր կամ փոքրաւոր,
Միով բանիւ ո՞րն ասեմ, իմ ամեն բանս էր գովելի —
Իմ պատիւըս ընաւ չունէր ինչ քո իշխան, ինչ Թագաւոր։ —

Բարեկամաց հեօրմաթիցն*) արտասուեմ այժմ լալով,
Բոլոր կայքըս գոլափեցին, տէր և իշխան ինձ ասելով

*) հեօրմաթ = պատիւ։

Չխղճացին վերջին օրին, երբ անտէր տեսին Վասակին,
Յամին հազար և ութ հարիւր եօթանասուն թուականին: —

* * *

Պատերազմի անունից
սիրտս վառված կրակ է դառնում,
Թնդանօթների ձայնից
աչքըս արիւնով է լցւում: —

Ես չեմ խղճում, ոչ մեռնողին,
ոչ կենդանի սպանողին,
ոչ կանանց արտասուելն
ոչ երեխայոց լալն: —

Ես բոլորին մոռանումեմ,
ընկերոջս էլ չեմ ճանաչում,
բայց մէկին ես վաղ ծախուածեմ
հոգի, որին միտս եմ պահում: —

* * *

Օտար կեանք:

Ջօր և գիշեր շիւան արի օտարութեան ձեռքիցն,
Զգիտացի, չարն՝ բարին, կամ ինչէ դուրս կարգիցն,
Հարցնիլն ամօթ արի, տեղեակ լինեմ յարքիցն
Եսպէսով ես զուրկ մնացի, չիմացայ հալն քաղաքիս:

Ես երկիրն գալու օրերս, քսան և մէկ տարու էի
Աշխարհն ինձ խորթ երևեց, ես նորանից հեռի էի,
Տնիցըս երբ դուրսի գալիս, խալխիցն ես թագչում էի,
Մի խօսքով ինձ՝ դուր չի եկաւ ոչ մի կանօնըն քաղաքիս:



Ջանումըս էլ եղ չմնաց, կօտլէտ, բիւշտէքս, սուփ ուտելով,
Բօզբաշն ես միտ բերելիս, օրըս անցնումէ ախ ու վախով
Մի բաբաթի տուն չգտայ, քուչայ է քուչայ մանգալով
Իմ խելքովն, ճիշտ թամամ չէ, ոչ մէ միզանն քաղաքիս:

* * *

Նոր Հայրենի:

Ի զուր չենք, մենք մարդ անուանել
Հայ անունը մեզ սեփհականել,
Թէպէտ յաւիտեան դերի եմք դարձել
Եւ տուն ու տեղից եղել անվայել: —

Աշխատեցէք ինչքան, որ դուք ուժ ունենաք
Ահ մի՛ արէք և երբէք դուք, մի՛ ծուլանաք,
Ձեր աշխատածիցն, հայ մարդուն մի՛ զրկէք
Աղօթեցէք Հայերը չունենան կարիք: —

Թո՛ղ, քրտունք մեր չ՛դադարեն,
Նոցա պտուղքն լինին զալար,
Աչաց, արտասունք չ՛պակասին
Որ թափումենք ազգի համար: —

Թո՛ղ, չարչարւի խստութեան մէջ,
Սիրտք մեր ցաւիցն անպակաս,
Մի՛ թողո՛ւք դուք հեռի ՚ի ձէնջ
Ձեր որդքերանցն մատղահաս: —

Աշխարհումըս բոլորեքեանս հիւր եմք
Թէ որ այդպէսէ, միասին մենք ուրախ լինեմք,
Եւ այն մահն մեզի գրկելիս,
Մէկ մէկու թող, մօտ մենք թաղուենք: —

Այսպէս մեր նախնիքն ապրէին,
Սիրով և միշտ միաբան
Եւ նոքա միշտ քաջալերէին,
Այս մեր ազգն Հայկական: —

Նոքա, ազգի անուան համար
Հաւատներն պինդ պահեցին,
Եւ օրինակ մեզի համար
Իւրեանց կեանքն զոհեցին: —

Նոքա իւրեանց գլխեցուցին [1])
Բայց թշնամեաց դէմ հպարտէին,
Եւ ՚ի մեծ, մեծ նեղութեանն
Էին նշան անվհանդութեան [2]):

Ինչէր նոցա, պըրծիլն
Եւ դառն արտասունք թափիլն,
Եթէ ո՛չ միշտ ցանկութիւնն,
Որ մնայ հաստատ միութիւնն: —

Եւ թէ ինչքան չարչարուելով
Արիւն արտսունք են թափել,
Ազգի համար աղօթելով
Բանտերումն են նստել: —

Սէրն էր խեղճերին նեղում
Թէ անգէտ ընդդիմութիւնն,
Այդ միայն Ած է գիտում
Եւ այն անյայտ սրբութիւնն: —

[1]) գլուխըր կտրտել: [2]) անյաղթ:



Դարձն եկէք, աղօթեցէք,
Հաւատ, սէր, յոյս, ճանաչեցէք,
Եւ ձեր որդւոցն խրատեցէք,
Որբ է Հայաստանն իմացէք: —

* * *

Քէյֆ:

Խմենք ուրախ, մեր սրտին
Այս է միշտ թանկագինը,
Ծխենք մենք, միշտ թամբաքին
Քանի էժան է գինը,

* * *

Տարակուսեալ:

1.

Ինչանեմ թէ զատիկ է
. . . . . . . . . . . . . . . . . . . :
Էլ իմ քէյֆըս չի բացւում
Հոգւոյս թելն է մզուած,
Ահա մահն է ինձ մօտանում
Չունքի ես եմ ծերացած: —

2.

Մինչև դուք էլ հեռի լինիք
Այդ անաչառ *) մահիցն,
Աշխատեցէք գերի չլինիք
Եւ հեռանաք ցաւիցն: —

3.

Ես անդադար ասումէի,
Թէ սիրումեմ անունըս,
Բայց օր ըստ օր պակսումէի
Տեսէք, այս էր իմ օրըս: —

4.

Տարիներով աշխատածըս,
Սկսեցի մսխել առատ,
Ցնծղեցի ես ունեցածըս
Կեցցէ, Սէրն և Հաւատ: —

*) խաթըր չի նայող:

5.

Այսօր քէյֆըս վերջացելէ
Ահա՛ եղբայրք թանկագին,
Բախտըս ինձնից հեռացելէ
Եւ թողել ինձ լալագին: —

6.

Ճարըս ինչէ, տանեմ պէտքէ
Կնոջիցս է այս կիրքն,
Կին չէ, Ա՜ կրակէ
Որ քցեց ինձ այս դէմքն: —

7.

Թէ և ես էլ մեղաւորեմ,
Բայց կխղճան բոլորով,
Հիմա պիտի, որ համբերեմ
Եւ ձեզ պատմեմ նաղլով *):

8.

Քաթիպի մէկը տասն արեցի,
Այս կամքն իմ կնոջըն էր,
Ասաց՝ եախին ոսկի շարի
Կատարեցի արժանի էր, —

9.

Դատ չ'քաշեց իմ հա՛յհա՛յըս,
Մի տարի անցաւ ես քաղցած,
Չ'ունքի եկաւ վա՛յվա՛յըս,
Մնացի տկլոր կծկուած: —

10.

Այժմ օրերըս անցնումեմ
Աղքատութեանն հնազանդ,
Գլխիս եկածն գրումեմ
Արձակ վախտիս ժամ է ժամ.

11.

Աշխարհումըս ո՞վ է տգեղ,
Ո՛վ մեղաւոր, ո՛վ անմեղ,
Բոլորին եմ ես նկատում
Եւ բոլորին գնահատում: —

12.

Ցիմարարած ես երգումեմ
Այլոց համար երգ ուրախ,
Եւ նոցանից միշտ խնդրումեմ,
Որ չ'անեն ախ ու վախ: —

13.

Այստեղ տուն է ուրախութեան
Միայն աղքատն չունի դադար,
Զի դրախտէ հարստութեան
Ով փող ունի, նա է արդար: —

14.

Աղքատ մարդն և սոված,
Առանց պատան մեռանի,
Աւելի երեխայ ծնածն
Անմեղ ջուրն անկանի: —

*) առակ:



15.

Ինչքան որ սարվախտ*) լինես
Վատ բանից հեռանաս,
Ճար չ'կայ արձակ լինես
Եւ վիճակըդ չ'ստանաս: —

16.

Իրաւի է այլոց լացն
Թէ լեղի է շատերի հացն,
Ես էլ այժմ իմացայ
Այժմ, երբ որ ծերացայ:

17.

Գիտցուք թէ դու մեծ մարդ եղիր
Անուանի կամ քահանայ,
Խօսքիս լսիր, քեզ մի՛ նեղիր
Չարչարանքըդ անհիմնայ: —

* * *

Ստուեր:

Ստուեր-քոյ նազն ու սէրն
Կեանքն ու բախտն են մեր, ստուեր,
Սուտ խօսքերին վկայ չէ տէր
Նոր լըերով հնչէն օրեր:

Անցաւոր ուրախութիւնն,
Մի օրուան սէրն, ճշմարիտ չեն...
Ի սիրտ մոնէ մոռացկութիւնն
Եւ աչք մեր քնօք փակին:

* * *

*) արթուն:

*

Իմ տողերըս միշտ վկայ են
վկայ անմահ և ուղիղ,
Թէ ում արտասունքն թափվել են
առանց պատճառ և անմեղ
և ո՛ գիտէ, ում համար։ —

*

Ուրախ ժամեր, ջահիլ օրեր
Աշխատութեամբ անցուցի,
Ազատուիցն զուրկ, բանասէր
Զ.խս ծոյլուիցն հեռացուցի։ —

Թէ և իմ աշխատանքից
Սիրտս ու հոգիս է ուրախանում,
Բայց էն վատթար բամբասանքից
Միտքս ինձնից է հեռանում։ —

Ինձի չէ՛ պէտք, չար դատաստան
Ու գովասանք ձեր դատարկ,
Չեմ հալ ես ձեզ ապաստան
Թո՛ղ լինիմ ես միշտ անարգ։ —

*

Մուխամմադ 'ի պատիւ արժանընտիր երգիչն „Սէյեադ“։

Քո անդադար աղօթքովդ, Հայաստանին լոյս ծագեցաւ,
Անուշահամ խօսքերովդ, մեծ ու փոքր հաղորդեցաւ,
Քեզ մուղարրար լողլ, հոգին ու սիրտն միացաւ
Ազգիս միջին բնակալ ես, թո՛ղ քո թխսահաւըդ լինեմ։ —



Ինչ կլինէր օր ու գիշեր, միշտ քեզի հետ գեա՛փ անէի,
Գիտութեանըդ համբաւն, ես առաւել չաւ անէի,
Կեցարանիդ չորս բոլորն, գիփ զար ու զարբա՛ր անէի
Դու „Սէյեադն“ ես, թո՛ղ ես էլ քո զուլըդ լինեմ։ —
Ինչ կլինէր՝ քեզի պէս, մի քանի Սէյեադս լինէր,
Այն շնչատու երգերիցըդ, մի քանիսն մտքիս լինէր,
Անօգնական երկրումըս, քեզի պէս մի տէրս լինէր
Այդ քո անգին քիմեյի, թո՛ղ քաջ պահապանն լինեմ։ —
Տարիներով աշխատածիդ, կէսն աղքատներն կերան,
Դու՝ քո կեանքըդ զո՛ւր մաշեցիր, չ'առողջացաւ սրտիդ
եարան,
Իրաւի է՝ այս աշխարհը ողջ եղել է առան տարան
Անմխիթար Վ.ասակն եմ, թո՛ղ՝ քո հաւադարըդ լինեմ։ —

*

Ծերք։

Ինչու մին մինից հեռանանք,
Երբ ծերութեանն եմք մօտացել,
Գեղեցկուի՞ կամ գովասանք
Մեզնից՝ հեռի է մնացել։ —
Այժմ սիրտք մեր համաձայն,
Որ միշտ լի է արիւնով,
Աշխարհից միանգամայն
Հեռանումեն շտապով։
Ինչ մնաց մեզ, այն օրից,
Որ Հայաստան փառք ունէր,
Մեր ազգի այն վատ լեզուից
Կրումենք մեք զրկանքներ։ —

*

* * *

Ինչպէս չասեմ ճշմարիտն,
  Որ յայտնի պատճառ ես ունիմ,
  Թէ մեր աղջկերանց գաղտնի միտքն
  Է „երբ ես հարսն կուլինիմ": —
  Զարմանք չէ, հարսն եղածն
  „Միրզայու" պարն է սովորում,
  Եւ „կարմրադեղն" ծածուկ տեղն
  Իւրեան երեսն է քսում: —
  Զարմանք է, որ նորափեսայն
  Պաչպաչումն նշանածին,
  Էլ չի գիտում դրան ետևին
  Կինը պահելյ „սիրողին":
Ինչպէս չասեմ ճշմարիտն
  Որ յայտնի պատճառ ես ունիմ,
  Ութսուն տարօք պառաւ անմիտն
  Նոր սիրահարուած կուտեսնիմ: —

* * *

Ա՜յ վկայ է, մօրըս կասեմ
  Նա խիստ անկարգ բանէ բռնում,
Վախտ տնքումայ, հոգւոյ հանում
  գեղեցկութեամբս երդւում: —

Չի հաւանում նա, իմ սիրոյս
  կրակ է ասում խօսքերիս,
Նորա լացի պատճառն ես չեմ
  Ա՜յ վկայ է, մօրըս կասեմ: —

Գիտեմ՝ նորան եմ ուզում նայել
  Կամ միշտ նորա մօտը նստել,



Հեռանալու ոյժ ինձ չունեմ
  այդ ինչիցն է, ես չգիտեմ: —

Պատրաստ եմ լալ երեխի պէս,
  երբ թէ հեռանայ մօտէս,
Բայց թէ՝ պաչ տամ մեղք կանեմ
  Ա՜յ վկայ է, մօրըս կասեմ: —

Բայց եթէ, որ ճլերք ընկնի հիւանդանայ
  աշխարհիցըս միանգամայն նա, հեռանայ,
Այլէքըն լսեն, թէ ինձ համար լաւ չէն ասիլ
  չէ, էլ ո՛չ ոքի ես չեմ ասիլ: —

* * *

Առ Հայրենիք:

Ահա՛, իմ սիրտըս ցաւէն հեռացաւ
  Ճշմարտութե՛ ձեռիցն, ուրախութի՛նն ոչնչացաւ,
Ո՜վ իմ անթառամ, հայրենի աշխարհ
  Թռչումեմ քեզ մօտ, սիրտս է անա՛հ:
Ինչքան, որ ցաւեր և պէսպէս անցքեր
  Ինչքան, տխրութի՛ և այլայլ բաներ,
Թէ որ ես տեսնեմ, հրաշալի մէկդ *)
  Հոգիս չի կորուիլ, քոյ սիրուն հողէդ:
Քեզնից անբաժան հոգիս, է մոլորւել
  Այս հպարտ կամքըս, քեզ գերի դարձել,
Ինչ անեմ հիմա, ինչըս է մնացել
  Զի՛ մահիս դոնակն էլ, դու ես տիրել: —

*) Դի քէն:

Առաջիդ կայնած, լալօք արտասուեմ
Քու սիրոյդ պարգեւն ընդունել կուզեմ,
Թող, որ մոռանամ առաջւան ցաւերըս,
Թող, որ մեռանիմ, անցել են ժամերըս։

* *
*

## Վանեցի Հայ։

Խօրէր գացէ գօնչագլուխ[1]), մինակ տեսին զիս բռնեցին,
Ավվալ[2]) տարին մի աղտոտ տուն, քսան ուռուզգի զարկեցին,
Ոտուներուս շղթայ դրին, սօրա տարին բանտարկեցին,
Խուռն կըզին, մացի լալօք, զիս մինչ 'ի լուս հօն թօրգեցին։

Դատաստանին ուզիմ առաջ արզըս անեմ, ասիմ „բարին" չէ
զիմ նօբաթ,
Ըսաւ "էշաօ՛ քօ-լակ, ոտճակ, եօ էշնայ-ն ըն վէնատատ,"
Տնաւեր ըլլաս՝ խմալ „էշաօ՛" վալլա՜հ, բիլլա՜հ չըմդէ իշտօ՛,
Բարին զուրբան, տօ՛ ինչ կուզիս, զէդա[3]) իմ թուր, զէդա
փիշտօ՛։

Առաւօտուն կանուխ, փա՛րթալնիկն զիս դուրս թօրգեց,
Միրզան առա՜ւ ղալամ դաւաթ կսէ, „էշարատ ըն ղաղըմէշ,"
Գրեց, նշխեց, փողերս առաւ, չըմդէ օղօրդ թէ սուտ խաբեց,
Մասալ կսէն՝ „սանդա քէշիշ, հէչ գեօրմըսան բիր բէյլա իշ"։

* *
*

Ինձի համար միշտ ասումեն
բարի մարդիքն անասան,

---

[1]). մեծ գլուխ ունեցող։ [2]) Նախ և առաջ։ [3]) ահա՛։



Թէ գրածներըս անպիտան են
և ես անկիրթ անուսման։ —

Լուռ եմ, հստից առնեմ այնպէս —
գիտուն բաներ շարադրել,
անգէտ եմ և ընդունակութըս
է, ապտակով երես ներկել։ —

Գիտունք վրաս կուծիծաղեն
գիտեմ իւրեանց հաղերումն,
և ինձ համար միշտ կուասեն
թէ՝ կրթուած եմ անտառումն։ —

*
* *

Իմ սիրտըս արիւնով լցուումէ
սիրել կամենումէ,
հոգիս տնքումէ
կեանքըս մաշումէ
օր ըստ օր։ —

Ուլ այն չեմ հիմա, ինչ էի առաջ
չեն ասում ինձ քաջ,
չունիմ ես դադար,
չունքի դու տարար,
հոգիս քեզ գերի։ —

Արդեօք կունենամ ես
կեանք առաջուան պէս,
թէ կչարչարես
և կըրկես
պարգեւիցըդ։ —

Չէ ամօթ խօսալն, տուր ինձ պատասխան
արա՛ ինձ արժան,
եղի՛ր յաւիտեան
ինձնից անբաժան
կեանք պարգևի՛ր : —

* * *

## Զանգի : 1)

Մի՛ շտապիր առաջ երթալ
Ով իմ Զանգի խոխոջան,
Վախտըդ շատ է մի՛ խըշխըշալ
Շուտ կ'հասնիս Երևան :

Մի՛ զարմանար, որ ես սառած
Ափիդ վերայ եմ կայնել,
Ո՛չ շարժումեմ, լեզուս լռուած
Անցեալ կեանքս եմ միտ բերել : —

Չկան գիտեմ, էն օրերը
Այս խոցոտ սրտիս համար,
Բայց հաւատա՛ քու ափերը
Անգին է միշտ ինձ համար : —

Իմա՛, զի ո՛չ ույժս է մնացել
Աշխատանքըս է անպէտքացել,
Օրերըս եմ զուր անցուցել
Եւ մուրազիս 2) չեմ հասել :

1) Հրազդան կ՛մ Զանգի : 2) բաղձանք :



Միտ առնելիս ամաչումեմ
Զունքի աղքատացել եմ,
Առաջուան հոգիս կորցրած
փնտռումեմ դէմդ կայնած : —

Մի՛ նախատի՛ր հպարտութեամբս
Որով թողի հայրենիքըս,
Մի՛ միտ բերիլ արտասուքըս,
Եւ քեզ մոռանալըս ցանկում :

Հանդարտութեանդ խառնակիչ
Մանկութեան իմ եղէ քեզ,
Հիմա խնդրումեմ ինձի ների՛ր
Քու որդիդ եմ, ընդունի՛ր : —

Զանգի իմ, խըշխըշան Զանգի
Նորէն շրջեմ ափերումըդ,
Ես այն չեմ, բայց դու ծերունի
Դեռ չես փոխել քու տեղըդ : —

Նոյն տեղերն են, նոյն գիւղերն
Մայր քաղաքաց հողերն,
Նոյն է, նոյն, — միայն ո՛ւրէ
Գըլխիդ անուանի տէրն : —

* * *

Ապրումեմ ես առած յուսովդ
ո՛վ իմ ընկեր մշտական,
քու անդադար խնամքովըդ
կապրեմ մինչ 'ի գերեզման :

Ամէն մէկ մի քեզ տեսնելիս
յանկարծ միտս եմ բերում,
Թէ՝ դու ինձ նոր կեանք ես տալիս
և միշտ քեզնով եմ ապրում։ —

Բաժանուելու թէ մենք լինինք
անունըդ ձեռքիս կ՚հեռանամ,
և թէ կրկին, միմեանց տեսնինք
ձայնըդ լսեմ կուրախանամ։ —

* * *

Բարձրացրու քո գլուխըդ
երազըդ սուտ է մի հեթհեթալ,
սրբի՛ր թափած արտասուքըդ
անցեալն հիմա յետ չի՛ գալ։ —

Ինչու շտապով թաղել կուզես
դեռ անկատար, քո յոյսըդ,
բախտիցըդ ինչու կ՚փախչես
թէ և զուր չէ այդ լալըդ։ —

Ահ մի՛ աներ չար մտքիցն,
որ նոր սրտումդ է լցուած,
յուսա, որ Նա երկնքիցն
միշտ է գթած, ողորմած։ —

* * *



Կամուրջ Ալէքսանդրօպօլու։ [1])

Ամն հազար և ութ երիւր, երսուն ինն էր երախտաւոր
Երբ ՆԻԿՈԼԱՅ ՊԱՒԼՈՎԻՉՆ էր Ռուսիոյ մեծ Թա-գաւոր,
Մեր Գիւմրուայ ժողովուրդն, որ ջանիւք են աշխատաւոր
Մեծ հրաշալի աշխատանօք ձգեցին կամուրջ փառաւոր։ —

Նոցա արած աշխատանքն, մին շահու օգուտ չի բերաւ
Ֆահլայ[2]), բաննի[3]) տուած փողն, ափսոսումեմ 'ի զուր կորաւ,
Ածանից էր էս հրաշքն, խալխի ջիբին զեան եղաւ
Այն նորաշէն կամուրջն, մին օր ինքն իւրեան փլեցաւ։ —

Խալխն կրկին ժողովք արին, մեծ հանդիսով վիճակ բացին
Կամուրջն այն, խորհրդով Պարոն Մուստաֆովին յանձնեցին,
Ասացին՝ թէ փահլի խարջն իւրեանց մէջէն կժողվին
„Շնորհեցէքի“ ժամանակն ամենեքեան յետ կայնեցին։ —

Տէր Կիրակոս քահանային, բերին միջնորդ կարգեցին
Յիշեալ լիջի՛ք ասելով, տասներկու մանէթ ժողվեցին,
Ոմանք մանէթ, ոմանք երկու, ոմանք կոպէկ շնորհեցին
Պետրոս աղին էլ զօռեցին, հազիւ տասն կոպէկ գրեցին։ —

Այս ժողովքի թաբաղէն բոլոր քաղաքն մանեկաւ
Հոգևոր տիրոջ, քարոզն՝ մեզի մի օգուտ չիբերաւ,
Գանձանակն որքան էր, ուր մնաց, մեզնից ոչ ոք չիմացաւ
Տէր Կիրակոս քահանան էլ տասներկու մանէթն կերաւ։

* * *

---

[1]) կամ Գիւմրի։ [2]) մշակ։ [3]) каменьщикъ.

*

* * *

Երբ գիշերուայ քաղցր քունը
դառնումէ տէր մարդկանց տանը,
ես միայնակ անօգնական
մնումեմ այստեղ անտիրական: —

Իմ ձայնըս ոչ ոք չի լսում
տուն ու պալատք քնով լռուած,
միայն քամու ձայնն եմ լսում
այս քարերի վերայ նստած: —

Ինչ եմ խնդրում անխելքի պէս
այս իմ դատարկ երգովըս,
այն հոգին, որ է քարի պէս
միշտ փակումէ իմ ճամբէս: —

Կեանքիցըս եմ անբաւական
աշխարհիցն եմ հեռացել,
ահա այս է ինձ մնացել
պտուղ սիրոյ մանկական: —

Ծռուած բախտիս ես լսելով
չարչարանաց թաղն եմ հագել,
և սպասումեմ, էս օրերով
ով կուգայ ինձ ազատիչ: —

* * *

Գիւանի:

Մնաս բարեաւ ես գնումեմ, ո՛ գիտէ դառնամ թէ ոչ,
Մի՛ այրիր ինձ բոցով հրոյդ, ո՛ գիտէ դառնամ թէ ոչ
Կասկած ունիմ յանկարծակի կորուսցնենք մէկմէկուս.
Զգեցիր ինձ օտար երկիր, ո՛ գիտէ դառնամ թէ ոչ: —



Յոյս ու Տէրըս միայն Նա է որին ինսան չի տեսել,
Որն այժմ և յաւիտեան մեր նեղութեանն է հասել
Աղաչիր. „Որ խնդրէ՝ նմա տացի“ Տէր և Փրկիչն է ասել
Ես և այս օտար երկրէն, ո՛ գիտէ դառնամ թէ ոչ: —

Արևն քրտամբք աշխատեցի, տնկեցի վարդ, սուսանի
Նոցա տեղը փուշ բուսնեցաւ էլ չի տեսի սոխակին,
Աշխատանքըս զուր կորուսցի, դարձայ ընկեր սատանի,
Անուն Վասակ միտքըդ պահէ, ո՛ գիտէ դառնամ թէ ոչ: —

* * *

Լաւ քննիր դու իմ հարցմունքըս,
հոգեակ Շուշան աննըման,
Թէ այս ապերախտ աշխարհումըս
ով կմնայ անվախճան: —

Կամ թէ ծաղկած, տունկ, մանուշակ
ում ապաստան կմնայ,
Եւ թէ դալար դաշտուց վերայ
ով հիացած կմնայ: —

Բաւ է հոգեակ մի՛ երկմտիլ,
հաւատա՛ քո Վասակին
Հոգիներըս բոլորեքեան
մի օր կուտանք հրեշտակին: —

* * *

Թուշըրդ դէպ երեսիս թեքիր
Թո՛ղ արտասունք մեր միանան,
Եդ ծըծերըդ դօշիս քըսիր
սիրտըներըս ուրախանան: —

Երբ նայումեմ քո աչքերիդ
դադարումէ սրտիս ցաւը,
Երբ պաչումեմ պռոշներըդ
կանաչումէ հոգւոյս ծառը: —

Երբ գլուխըս դօշիդ թեքում,
կարծումեմ թէ դրախտն իմս է,
Այս „սիրեմ", ես չեմ գիտում
աչքէս արտասունք էր կթափէ: —

Երբ այն վառուան բոյուն թափուին
արտասունք մեր 'ի բաժանման,
Կուրըս մէջքովըդ փաթութած
մռնիմ երջանիկ 'ի չարչարման: —

* * *

## Առ Պ. Ա. Ա.

Պարոն Նիկ.., Ա. Ա., ես փող սիրող եմ քեզի ինչ,
Ես անամօթ կամ ամօթով, ինչ էլ որ եմ քեզի ինչ.
Դու միշտ փողիդ հիսաբն տես դաւթարներըդ պինդ պահէ
Ես ճշմարիտ կամ բէհիսաբ, ինձ համար եմ, քեզի ինչ: —

Դու աշխատիր ինչպէս Ռօչիլդ հարուստանաս, ճոխանաս,
Խալխն հարուստ կամ թէ աղքատ չքաւոր են քեզի ինչ,
Դու աշխատիր Հուլմիստր անուանը, որ մինչ 'ի մահ չըմնաս,
Ոմանք մեռած կամ կիսամեռ, կամ կենդան են, քեզի ինչ: —

Ինձ բոխումըդ բան գործ մի չինիլ, ճանապարհդ իմացիր
Ես աստանօր կամ Երևան եմ բնակուած՝ քեզի ինչ,



Դու աղօթիր արժանապէս արքայութիւն ժառանգես
Ես Հայ թէ Թուրք, կամ փրոթէսթանդ եմ՝ քեզի ինչ: —

Դու չափից դուրս ուրիշներին մի կամենար բամբասիլ,
Ես Մադաթով կամ Մադաթեան, կամ այլ ինչեմ, քեզի ինչ:

* * *

Երբ ես բարձիս վերայ պարկած
փակումեմ հոգնած աչքերըս,
և այդ քո չար կամքիցդ փախած
ասումեմ էս վերջին խօսքերըս:

Լոյս տուր, լոյս տուր, իմ լուսատու
լուսովըդ ինձ ուրախացրու,
գիշերուայ լապտեր իմ սիրելի
ահա տես, քունըս չի գալի: —

Ու ինչ եղեւ այն քո լոյսըդ
միթէ կուզես ինձ խաբել,
և թէ ուրէ, այն քո յոյսըդ
որ ինձ բաժին էիր տուել: —

Լոյս տուր, լոյստուր, իմ լուսատու
լուսովըդ ինձ ուրախացրու,
գիշերուայ ընկեր իմ սիրելի
ահա տես քունըս չի գալի: —

Իմացայ ես քո արարմունքըդ
ինչ անհոգի ես եղած,
չարչարումէ ինձ պատկերըդ
թէ և նակէլ է արարած:

Հանգի՛ր, հանգի՛ր, չար լուսատու
Իմ տանըս դու լոյս մի՛ տար,
Հոգւոյս համար, չես ուրախատու
հանգի՛ր, լոյսըդ հետըդ տար:

* * *

Մուխամմազ:

Ինչքան կուզես խորովվիր, ամէն մարդ իր խէյրն է ուզում,
Ագահի պէս սար ու ձոր, լցնել իւրեան փորն է ուզում: —

Այսքան տարի ինչ ապրեցի, ոյժ ու ղուաթս դու եղար,
Իմ տարակուսեալ հոգւոյս, դու գիւման ու յոյսը եղար,
Առանց ճրագ գիշերները, իմ շամու շամդանըս եղար,
Այս աչքածակ աշխարհումը, քեզ հազար ամ կեանք եմ ուզում:

Կամենում եմ, քո անունըդ ամենայն տեղ մի հատ լինի,
Ինձպէս շատը թող դռանըդ, մի փոր հացի մշակ լինի,
Գիշեր, ցերեկ, քեզ պահապան, Քի՛ սո՛ խաչն լինի,
Այս հոգւուցըս բաժանուիլ, քեզ մօտ բերելիս եմ ուզում: —

Միայն ես չեմ ո՛վ սիրելի, քեզ վերայ այսպէս խօսողն,
Թո՛ղ չորանայ նորա քօքը, ով է քեզ անմեղ դատողն,
Թո՛ղ զօրանայ, ազգ ու տունը, քեզ միշտ գովելի ասողն,
Ինձ այդ սիրոյդ տօթն է այրում, բերնիդ անոյշ հովն եմ ուզում:

Ամենեւին ես չեմ ուզում, որ ուրիշի մալն լինիս,
Այս ինչու չեմ արժանի, որ դու իմ իղբալըս լինիս,
Ծերութեանըս ժամանակին, խնդրումեմ սանդեարըս լինիս,
Որ դրախտի կտորին, դու լինիս արժան եմ ուզում: —



Չեմ ուզում, որ ուրիշն, քեզ իւր կամաց մօտքին բերի,
Ինձի համար իւր ձեռովն, դժոխքի տանջանքն բերի,
Քո խղճացած Վասակիդ, մի՛ թո՛ղ էն կրակն կէրի,
Արժանացո՛ տեսութեանըդ, որ միշտ փափագմամբ եմ ուզում: —

* * *

Լուռ կէս գիշեր ամառնային
Իմ լալըս անտառ հասանէր,
Եւ պահապանն անտառին
ցաւակցութեամբ գլխ ողջունէր: —

* * *

Իշխան և Աղքատ աղջիկ:

Երեկոյին ուշ, իւր յորսից,
մինչ դէպ 'ի տուն էր դառնում
Ձիով հանդարտ, ծաղկած դաշտից
կոյս աղջիկ էր անցկենում,
Ձիաւորն իսկոյն կայնեց,
աղջկան այսպէս բարևեց.
„Այս ծաղկազարդ դաշտերից,
„Ճամփայ ձգեմ մինչ 'ի տուն:“
— Ո՛չ:

„Դու լսիր ինձ՝ իմ աննըման,
„ահա՛ քեզի մի հարցումն,
„Դու խղճուկես անօգնական
„Ես հարուստ եմ մեծատուն,

„Կ՚ուզես լինել դու իմ կինըս.
„քեզ կ՛հանձնեմ վիճակըս
„Կլինիս այլոց նախանձելի,
„իմ կինըս դու լինիս մի։“
— Ո՛չ։

„Թէ այդպէսէ՝ մեծ անունը
„գուցէ լինի հաճելի.
„Յայտնիր ինձ քոյ ցանկութիւնը,
„որ դրօշակք չորս գիւղի,
„Քոյ թագօքըդ փաթութիւն
„և վրադ էլ թող տարածուին
„փառք, համբաւ և փաղփիւն
„համաձա՞յն ես իմ սիրելի։“
— Ո՛չ։

„Տուր ինձ խօսքըդ, այսուհետև
„դու չես լինիլ հարկատու,
„Այլ անուանի շքեղ տիկին
„գեղեցկութեան չաստուած դու.
„Քոյ գլխովըդ երգում կանեն,
„բոլորը կայնած առաջիդ,
„Կլինին ղուրբան սադաղայիդ,
„իմ կինըս դու լինիս մի։“
— Ո՛չ։

„Կ՛համաձայնիս՝ որ այսպէս բարձր
„և ոչ մի ժամ քոյ մտքերը —
„Ինչպէս այժմ. չէին թռէր
„աղքատ վիճակըդ կ՛թողնես



„Մեծ կոմսուհի կլինես,
„անցեալ կեանքըդ կմոռանաս
„Գեղեցիկ եմ և չեմ ծեր…
„իմ կինըս դու դառնաս մի։“
— Ո՛չ։

„Տուր շուտով ինձ յայտնի խօսքըդ
„քոյ առաջիդ երկրի Տէրն է
„Յայսմհետէ կեանքըդ — բախտըդ
„ուրախութեան մէջ կու անցնէ.
„Թագուհի ես, քո առաջիդ
„բոլորեքեան ծառայ կինին,
„Խօսքովըդ ցաւերս կդադարին
„իմ կինըս դու դառնաս մի։“
— Նա՛։

* * *

Գիշերային միտք։

Երբ միտք բերեմ հայրենիք իմ
արեամբ լեցուի տկար սիրտ իմ,
քուն լինելու կտրի ճարըս
և դառն, դառն լան աչքերըս։ —

* * *

Ո՛ւր են։

Ո՛ւր են քոյ թուխ, թուխ աչքերըդ
Այժմ ո՞ւմ են պատկանում,

Արդեօք ո՛վ է քոյ պատկերիդ
Հիմա ախորժով նայում։ —

Կային ժամք, որ ուրախութեամբ
Այն օր ինձ կուգայիր,
Եւ քեզ հետ մեք ազատութեամբ
Կ'անցունէինք մեր օրեր։ —

Նոյնպէս և քոյ գողտրիկ սէրըդ
Նազով դու ինձ յայտնէիր,
Մխտսէ ինչպէս, մանաւանդ երբ
Իմ խօսքերըս հաւնէիր։ —

Մօտըս գայիր ուրախ սրտով
Համբուրէիր ինձ սիրով,
Բայց խօսքերովս էլ ես քեզի
Խղճմտանքի չ'բերի։ —

* * *

## Այլայլութիւնն աշխարհի։

Ինչ ես դարձել այ աշխարհ ասումեն հատըդ չկայ,
Վատ բաներըդ են մնացել, լաւըդ ասողին չգտայ,
Կուզեմ մի քիչ քեզ գովեմ, բայց բերնումըս համ չկայ,
Արած դատաստանումըդ ես ո՛չ մինն արդար չգտայ։ —

Մէկին՝ անգումար դովլաթ ու մալ ես շնորհում
Միւսին խիստ զրկողութիւնն է ջահում, *)
Մէկն՝ քեզնից միշտ շնորհակալ է լինում
Միւսն անճար սովածութիւնից է մեռնում։ —

*) պատահիլ։



Մէկին՝ տեսնելիս մարդ ափսոսումէ, որ մահն տանէ
Միւսին ասումեմ՝ թո՛ղ քեզ էն չար դեւն տանէ,
Մէկն՝ իւր հարստութեան չի կարողանում հիսաբն անէ
Միւսն աղքատ գոլով, ուզումէ գողութիւն անէ։ —

Մէկն ասումէ՝ չեմ գիտում էլ որտեղից ես փող դատեմ
Միւսն հարուստ Կրեզ, ասումէ փող դատողին ես կ'ատեմ,
Մէկն շէմք է լիզում, թէ՝ այսօր հաց չունեմ, որ ուտեմ
Միւսն հարուստներից հարուստ է, ասումէ դեռ ես աղքատ եմ։

Ղատերն անպէտք դրած, փողերի շահովն են ապրում
Ղատերն անպէտք մաշված, շորերի գրաւովն են ապրում,
Ղատերն սովի ձեռքից, մէկ մէկու են սպանում
Ղատերն իւրեանք են գող, պլոցն են 'ի զուր մատնում։ —

Մի քանիսն անկիրթ տաւար, բայց դատաւոր են դառնում
Մի քանիսն յայտնի գիտուն, հացի կարօտ են լինում,
Մի քանիսն 'ի պատիւ իւրեանց հօրն են ընդունւում
Մի քանիսն իւրեանք են արժանի, զրկուած են մնում։ —

Ոնց ասեմ իրաւի է, այս քո արած դատաստանիդ
Իմանումեմ, որ ստին տուտ չունի, երբ նայումեմ բաներիդ,
Ինչպէս կուտաս պատասխան, 'ի դէմ երկնային Արքայիդ
Ոնց չ'խառնեմ դառն լեղի, քո ընդունած բաժակիդ։ —

Ա՛խ այ Վասակ՝ ինչըդ է կորեր կամ ինչ կուզես առնել յետ
Վերջացրու խօսքերըդ և դիր այստեղ մի հատ կէտ.
Դատաքննիչն արգելեց, ասա՛ թէ նայեց քեզ խեթ, խեթ,
Երկար գրել չէ հարկաւոր, թո՛ղ հասկանան ամէն պետ։ —

* * *

* * *

Այ տղայ Օհան, անցեալ օրուայ ղըռհաղըռը, ինչխաբար էր ձեր տանը
Քնած տեղըս ինձի հասաւ, ալլահ ալլահի ձայնը,
Հէնց իմացայ երազում էր, որ ես տեսայ էս բանը
Մօտիկ տուի երազահանին, ասի տես ինչպէս բանէ ինսանը:

Էն օրուայ աստղը ցոյց տուեց, թէ պսակն լաւ կլինի
Աղջնէկն տղայ, և մեծ անուան տէր կլինի,
Ամէն տեսակ մատաղն, պէտքէ ընդունած լինի
Էլ ինչ մնաց պսակըդ, էն էլ թող շնորհաւոր լինի: —

„Շնորհօք մնաս պապի ջան, մօլիր մի տունըս օրհնի
„Նորահարսի ձեռքից, մի թաս գինի ընդունի,
„կանչեցէքին ըստեղ չէիր, յոյս ունեմ որ կներես
„Քո բաժինըդ մնումէ խնդրումեմ անտես չառնես: —

„Մօտիկ արի Հերիքնազ, մօտիկ պապի ձեռքը պաչի
„Պապի ջան ես եմ ասել, անծանօթներից թաքչի,
„Իմ կնիկըս բանին արի, ինքն հեղէ, տես ուրիշներին նմանչի
„Հրամայէ էս թասն խմէ, տուր մեզ օրհնանքն Արարչի:

Էս գինու պէս պայծառ մնաք, ձեր կեանքումը երկուսըդ էլ
Զար փորձանքի չպատահիք, էն Աստուծուցն եմ խնդրել,
Տու նու տեղըդ հաստատ մնայ, լինիք ծերուէ արժանի
Պստիկ հարսի, ծլես ծաղկես, էս տունը բարի ես եկել:

„Անուշ ըլնի խմածըդ, քեզ արքայութիւն պապի ջան
„Տուն ու տեղըս քեզ փեշքաշ, գալըդ բարի ըլնի
„Խաղի տուն չի որդիդ եմ և քեզ միշտ ծառայ Օհան
„Միւս անգամին մեր տուն գալըդ, թող վրէդ պարտք ըլնի:"

* * *



## Վերջին խօսք:

Ականջ արէք բանիս հիմա, խելքներըդ դիփ մօտ արէք
Ձեր ապագայ կեանքին համար, հիմիկուանից միտքն արէք,
Թէ թշուառ կեանք քիչ-մը տեսնիք, դարդ ու շիւան դուք մի արէք
Աշխատեցէք ուսումն առէք, այս է խրատըս սիրելիք: —

Կար ժամանակ, որ ես էլ ապրումէի փաշի պէս
Հիմա բանիցըս տնքումեմ, համադանու իշի պէս,
Անցան և արդ սիրտըս, լեզուս պըրվումէն կրակի պէս
Բախտի ձեռից տիւ և գիշեր գանգատաւոր եմ սիրելիք: —

Ուսմանըս լաւ ժամանակն, ուշքու միտքս պարումն էր
Դատ այսպէս իմ կենաց վարքի, զօրունը փարումն էր,
Բեալի-թուին հազար ութ հարիւր վաթսունըութ տարումն էր
Այժմ հիւանդ, անտիրական, այս է իմ օրըս սիրելիք: —

* * *

Վերջ:

2013

12895